

Տիգրան Ռ. Պետրոսյան
բանաս. գիտ. թեկնածու

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՐԱՐԸ. ԹԵՎՖԻՔ ՖԻՔՐԵՑ

Հայ վրիժառուի կերպարը «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծության մեջ*

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի թուրքական մշակույթի պատմության մեջ իր առաջատար տեղն է զբաղեցնում բանաստեղծ ու մանկագիր, խմբագիր ու հրապարակախոս, մանկավարժ Թևֆիք Ֆիքրեթը (1867-1915): Նրա անվան հետ է կապված թուրքական գրականագիտության մեջ «Սերվեթ-ի ֆյունունի գրականություն» («Servet-i Fünun Edebiyatı»)¹ անվանումը ստացած մի ամբողջ ժամանակաշրջան, որն իբրև թանգիմաթյան գրական միտումների, գաղափարների և հարցադրումների շարունակություն, նշանավորեց հնից նորին անցնելու կարճատև, սակայն համարձակ ու վճռական մի հանգրվան: Թուրք ականավոր բանաստեղծը տեսավ Օսմանյան կայսրության պատմության երկու ճակատագրական դարաշրջան՝ սուլթան Աբդուլ Համիդի բռնապետական վարչակարգը և ապա՝ երիտթուրքերի տիրապետությունը:

Մուտք

Թուրքական գրականագիտության մեջ Թևֆիք Ֆիքրեթ գրողի և քաղաքացու անձի ու գործերի շուրջ ծավալված բանավեճերը, որոշ ընդմիջումներով, շարունակվում են մինչև մեր օրերը: Նրա մասին կարծիքներն ի մի բերելիս կարելի է հանդիպել հակասական բնորոշումների շղթայի. Թևֆիք Ֆիքրեթին բնութագրում են և՛ որպես «անհավատ» ու «անկրոն», և՛ որպես «մարգարե», բայց միաժամանակ նրան համարում են «հայրենասեր», իսկ երբեմն էլ՝ «աշխարհաքաղաքացի», «այլասեր» կամ «եսասեր», ուստի մերթ «հրեշտակ» են կոչում, մերթ «սատանա»:

Օսմանյան կայսրությունում բնակվող այլ ժողովուրդների հանդեպ Թևֆիք Ֆիքրեթի որդեգրած հանդուրժողական դիրքորոշումները երբեմն արժանացել են

* Հոդվածն ընդունվել է տպագրության 7.02.2011:

1 Օսմաներենում ֆնոտ բառը fen (գիտություն, արվեստ) բառի հոգնակին է: Այստեղից էլ «Սերվեթ-ի ֆյունուն» նշանակում է գիտելիքների կամ արվեստների հարստություն, գիտությունների գանձարան:

101
Գ. (Թ) Գարեթ, թիվ 1 (33) հունվար-մարտ 2011

ՎԵՄ համահայկական հանդես

կրոնամոլ ու ազգայնամոլ գործիչների «ներողամիտ» արհամարհանքին, իսկ ավելի հաճախ՝ քննադատական վերաբերմունքին: Բայց վերջիններս նույնպես չէին կարող չարձանագրել նրա ստեղծագործությունների բարձր ու մնայուն գեղարվեստական արժեքը:

Թուրք բանաստեղծը զարգացնում էր աշխարհաքաղաքացիության գաղափարը, որում ողջ երկրագունդը հայրենիքն է համայն մարդկության՝ անկախ ազգային պատկանելությունից. «Երկրագունդը հայրենիքս է, մարդկային ցեղը՝ ազգս» («Toprak vatanım, nev'-i beşer milletim...»)²: Ահա այս խոսքերի ու աշխարհընկալման համար թուրք հեղինակները հետագայում Թևֆիք Ֆիքրեթին մեղադրել են հայրենամերժության մեջ, նրան որակել որպես «անհայրենիք»³:

Մինչդեռ, ձախ հայացքների տեր թուրք գրող ու հրապարակախոս Սաբիհա Մերթերը ժամանակին նկատել է, որ Թևֆիք Ֆիքրեթի ստածողության մեջ համաշխարհային հանրության գաղափարը, որտեղ երկրագունդը համընդհանուր հայրենիք է, իսկ մարդիկ՝ եղբայրներ, իրականում ոչ թե հայրենամերժություն էր, այլ մարդկային բարձրագույն գաղափարների թանձրույթ⁴: Բանաստեղծի «Հին պատմություն» ազատախոհական պոեմը ժամանակին քննադատության է ենթարկվել հատկապես թուրք հոգևորականության կողմից: Թուրքական մամուլում Թևֆիք Ֆիքրեթի դեմ ուղղված հողվածների մի մասը պատկանում էր գրող Մեհմեթ Աբիֆի գրչին⁵: Նա Թևֆիք Ֆիքրեթին անվանում էր մարդ, ով չունի գաղափար ու հայրենիք: Մ. Աբիֆը գրում էր. «Այդ մարդը վիրավորել է իմ մարգարեին: Եթե նա վիրավորեր իմ հորը, ես կներեի նրան, բայց վիրավորել մարգարեին...Ես կմեռնեմ, բայց չեմ կարող ներել նրան այդ բանի համար»⁶: Իսկ ահա Մուստաֆա Քեմալ-Աթաթուրքը, խոսելով Թևֆիք Ֆիքրեթի նույն «Հին պատմություն» պոեմի մասին, այն որակել է որպես «աշխարհում իրականացվող բոլոր հեղափոխությունների աղբյուր («devrimlerin⁷ kaynağı»)⁸:

Հարկ է նշել, որ Թևֆիք Ֆիքրեթի կողմից արդուիհամիդյան վարչակարգի քննադատությունը երիտթուրքական իշխանությունները հետագայում օգտագործել են՝ հիմնավորելու համար իրենց ներքաղաքական նպատակները: Իսկ արդեն հանրապետական Թուրքիայում նրա ստեղծագործության քարոզումը էապես պայմանավորված էր գրողի գաղափարները Մուստաֆա Քեմալ-Աթաթուրքի սկզբունքների, մասնավորապես՝ լաիցիզմի (աշխարհիկության) հիմնավորման նպատակով օգտագործելու հանգամանքով: Այնուամենայնիվ, Թևֆիք Ֆիքրեթը գրական ասպարեզ մուտք գործեց ու մնաց որպես թուրք գրականության մեծ նորարար: **Իր ստեղծագործություններով և հասարակական գործունեությամբ նա կարողացավ հեռու մնալ նաև ազգային հարցում երիտթուրքական կառավարության որդեգրած հանցագործ քաղաքականությունից: Այս առումով ևս Թևֆիք Ֆիքրեթը խորապես առանձնանում է իր ժամանակի թուրք մտավորականների շրջանում:**

2 Tevfik Fikret, Halûk'un Defteri, Halûk'un Âmentüsü, s. 29.

3 Sertel Sabiha, Tevfik Fikret, Ideolojisi ve Felsefesi, İstanbul, 1946, s. 101.

4 Տե՛ս նույն տեղում:

5 Մեհմեթ Աբիֆը որոշ ժամանակ համագործակցել է «Սերվեթ-ի ֆյունուն» հանդեսի հետ, սակայն այնտեղից հեռացել է իր իսկ ցանկությամբ: Աբիֆի մասին մանրամասն տե՛ս Cemal Mithat, Mehmet Akif, İstanbul, 1939, Cerrahioğlu A., Mehmet Akif, Bir islam reformarörü, İstanbul, 1964:

6 Տե՛ս Akyüz Kenan, նշվ. աշխ., էջ 130.

7 Devrim բառն ունի ոչ միայն հեղափոխություն, այլև բարեփոխում իմաստը:

8 Տե՛ս Karaalioglu Seyit Kemal, Kapak / Resimleyen A.Galip Batu, İsmail Tunç, Türk Edebiyatı Tarihi – 2, Tanzimattan Cumhuriyete, İnkilap Kitabevi, İstanbul 1982, s. 623:

1. Կյանքը և գործունեությունը

Թուրքական պեղծիչի դասական Թևֆիք Ֆիքրեթի (1867-1915) իրական անունը Մեհմեթ Թևֆիք է: Նա ծնվել է Ստամբուլի Աքսարա թաղամասում՝ մեծահարուստի ընտանիքում: Հայրը՝ Հուսեյն էֆենդին, սուլթանական արքունիքում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, մասնավորապես աշխատել է կալվածքներ հաշվառող գերատեսչությունում (Defteri Hâkanî), եղել է թևքի (tevkîî), այսինքն՝ թուրքա (սուլթանի գրությունների վրա նրա անվան դժվարընթեռնելի կնիքը) դրոշմող: Կենսագիրներն ընդգծում են, որ նա ունեցել է անհոգ մանկություն, քանի որ հայրը մեծ հաջողությունների էր հասել և ապահովել էր ընտանիքի բարեկեցությունը: Թուրք կենսագիրներին հատկապես հետաքրքրել է, թե ի՞նչ ծագում ունի Թևֆիք Ֆիքրեթը և ինչպիսի՞ կրոնական միջավայրում է մեծացել:

Որոշ ուսումնասիրողներ նշում են, որ նրա պապը (հոր կողմից) ծագումով չերքեզ էր⁹: Թևֆիք Ֆիքրեթի ընկերը՝ թուրք հեղինակ Ռեզա Թևֆիքը գրում է, որ Ֆիքրեթի պապը՝ Ահմեդ աղան, հայրը՝ Հուսեյն էֆենդին, եղել են «կրոնասեր անձնավորություններ» և «բարեպաշտ մուսուլմաններ»:¹⁰ Մայրը՝ Հադիջե Ռեֆիան, սերում էր հունական կրոնավոր ընտանիքից: Նրա ծնողները հույների շրջանում անցկացված մանկահավաքի (ղևջիրմեի) արդյունքում Քիոս (Մաքրզ) կղզուց տեղափոխվել էին Ստամբուլ: Տասներկու տարեկանում Թևֆիք Ֆիքրեթը կորցնում է մորը, ով Մեքքա ուխտագնացության ճանապարհին մահանում է խոլերայից, և անցնում է մորական տատի խնամքի տակ: Տատի ծայրահեղ կրոնամուլ լինելն էլ իր դրոշմն է թողնում բանաստեղծի սկզբնական շրջանի ստեղծագործությունների վրա:

Թևֆիք Ֆիքրեթն ամուսնացել է իր քեռի Մուսթաֆա բեյի աղջկա՝ Նազըմեի հետ: Բանաստեղծի կյանքում և աշխարհընկալման մեջ իր ուրույն տեղն է զբաղեցրել հեղինակի միակ որդին՝ Հալուքը, ում նվիրել է մի ամբողջ ժողովածու և հրատարակել՝ «Հալուքի տետրը» վերնագրով: Հոգեբանական տեսանկյունից ուշադրության է արժանի Հալուքի կրոնավոր լինելու և քրիստոնյա դառնալու հանգամանքը, ինչին ամենևին դեմ չի եղել ինքը՝ Թևֆիք Ֆիքրեթը:¹¹

Սոցիալական տեսանկյունից Ֆիքրեթն ապրում էր բարեկեցիկ կյանքով: Ժամանակակիցները նշում են, որ նա օժտված էր պարտքի, նյութական ու բարոյական պատասխանատվության բարձր զգացումով¹²: Ֆիքրեթին բնորոշ էին ծայրահեղ զգացմունքայնությունը, բայց միաժամանակ՝ ներփակ բնավորությունը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նա անգամ իր ընտանիքում մեկուսացած կյանքով էր ապրում¹³:

9 Տե՛ս Գարբուզովա Վ. Ս., Поэты Турции XIX века, Ленинград, 1970, стр. 73.

10 Ֆիքրեթի ընտանիքի, նախնիների մասին առավել մանրամասն տե՛ս Rıza Tevfik, Tevfik Fikret, Hayati-Sanati-Şahsiyeti, İstanbul, 1945, s. 5-9.

11 «Միլլիյեթ» թերթն իր 1966թ. 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ համարներում տպագրել է Հալուքի նամակները, որոնցից մեկում նա վկայում է, որ իր կրոնական հայացքների փոփոխություններին հայրը չի առարկել: Հալուքը գրում է. «Կրոնական հայացքներիս փոփոխության մասին հայրս գիտեր, մենք խոսել էինք դրա մասին: Նա շատ պարզ էր մտածում այս հարցի շուրջ և ցանկանում, որ ես ինքս իմ որոշումը կայացնեմ: Ի տարբերություն հորս՝ մայրս բոլորովին գոհ չմնաց, մուսուլման պապիկս (մորս հայրը) հուսախաբ եղավ», «Milliyet», 22 Haziran, 1966.

12 Առավել մանրամասն տե՛ս Köprülü M. Fuad, Edebiyat Araştırmaları 2, (Tevfik Fikret ve Ahlakı), Ankara, 2004, ss.301-316:

13 Տե՛ս Rıza Tevfik, նշվ. աշխ., էջ 35.

Թևֆիք Ֆիքրեթը ստացել է լավ կրթություն. սովորել է Աքսարայի ոչյուշքիեում (Mahmudiye Rüştüyesi), այնուհետև ուսումը շարունակել Գալաթասարայի լիցեյում, որն առանձնանում էր Եվրոպայի հետ ունեցած կապերով: Գալաթասարայում ուսանելու տարիներին նկարչության դասեր է ստացել ֆրանսիացի նկարիչ-ուսուցիչներից՝ արժանանալով վերջիններիս գովասանքին¹⁴: Ֆիքրեթը նախագծել է իր ընկերներից շատերի տներն ու այգիները, ինչպես նաև՝ Բոսֆորի ափին գտնվող սեփական առանձնատունը: Հետագայում՝ ամսագրերում նրա նկարների և լուսանկարների տպագրումը դարձավ թուրքական իրականության մեջ նկարների տակ բանաստեղծություն գրելու նորաձևության օրինակ: Այդ նախափորձերի համապատկերում Թևֆիք Ֆիքրեթի՝ որպես «նկարիչ-պոետի» («ressam-şair») բերած նորամուծություններից էր տվյալ երևույթին ավանդույթի ուժ հաղորդելու փաստը:

Իր ուսման ընթացքում մեծ տեղ է հատկացրել գրականությանը: Գալաթասարայի լիցեյում նրան տաղաչափության հիմունքներ է դասավանդել հայտնի Ֆեյզա բեյը, գրականության տեսություն՝ Մուալլիմ Նաջին և Ռեջաի-զադե Մահմուդ Էբրեմը, որոնց ազդեցությամբ էլ Ֆիքրեթը գրել է իր առաջին բանաստեղծությունները:

1888 թ. ավարտելով լիցեյը՝ որոշ ժամանակ աշխատում է արտաքին գործերի նախարարությունում, ապա՝ մեծ վեզիրի (Օսմանյան կայսրության վարչապետի) գրասենյակում: Թվում էր, թե այդ ուղին երիտասարդին առաջնորդում է դեպի դիվանագիտական ապագա, սակայն դա տևում է ընդամենը մի քանի ամիս: Պետական հաստատություններում իշխող բյուրոկրատական մթնոլորտը ստիպում է Ֆիքրեթին ընդհանրապես հրաժարվել պետական ծառայող լինելու ցանկությունից: Նա վճռում է կյանքն ամբողջությամբ նվիրել գրականությանն ու մանկավարժական գործունեությանը: Երիտասարդ հասակում Ֆիքրեթը դպրոցում դասավանդել է գեղագրություն, թուրքերեն ու ֆրանսերեն (մասնավորապես՝ աշխատել է Գետիկ փաշա դպրոցում): Այնուհետև երկար տարիներ մանկավարժական գործունեություն է ծավալել Ռոբեր քոլեջում և նշանավոր Գալաթասարայի լիցեյում՝ որոշ ժամանակ ստանձնելով նրա ղեկավարությունը: Նշված ժամանակահատվածում (1908-1909 թթ.) Օսմանյան կայսրության այս կարևոր կրթական հաստատությունը մի շարք բարեփոխումներ կրեց: **Հետաքրքիր փաստ. այդ շրջանում լիցեյում որպես ընտրովի առարկա մտցվեց նաև հայոց լեզուն:**

Թևֆիք Ֆիքրեթի բանաստեղծությունները տպագրվել են տարբեր պարբերականներում՝ «Թևֆիք Էսադ» և «Նեջիբ» գրական կեղծանուններով: Դրանք դեռևս պարզ ընդօրինակումներ էին և կրում էին «Դիվանի գրականության» (թանգի-մաթյան շրջանին նախորդող արքունական գրականություն) ազդեցությունը: Հատկանշական է, որ դրանցում երկրի բարօրությունն ու առաջընթացը կապվում էին սուլթանի ու Ալլահի հետ:

Ֆիքրեթի բանաստեղծական առաջին փորձերը հաղթանակով են պսակվում Ստամբուլում լույս տեսնող «Mirsad» («Դիտորդ») պարբերականի կողմից հայտարարված գրական երկու մրցույթներում: Դրանց թեմաներն էին «Ալլահը միակն է», «Փա՛ռք նորին մեծությանը՝ սուլթան-փաղիշահին»¹⁵:

1889-1890 թթ. բանաստեղծն իր ստեղծագործությունները տպագրում է «Սիր-

14 Տե՛ս Ruşen Eşref, Tevfik Fikret, Hayatına Dair Hatıralar, 1919, s. 16.

15 Фиш Р., Писатели Турции-книги и судьбы, Москва, 1963, с. 20.

սաղ» հանդեսում, իսկ 1891-ից սկսած՝ ընկերների հետ միասին հրատարակում է «Malumat» («Գիտելիք/ինացություն») հանդեսը, որը 24-րդ համարից հետո փակվում է արդուլիամիդյան գրաքննության կողմից:

1894-1895 թթ. կարելի է համարել Ֆիքրեթի ստեղծագործական կյանքի առաջին շրջանի ավարտը: Այս շրջանի լավագույն գործերը «Eski Şeyler» («Հին գործեր») խորագրով ընդգրկվում են «Rübâb-ı Şikeste» («Կտարված քնար») ժողովածուի մեջ:

Սակայն 1896 թվականից հետո Ֆիքրեթի աշխարհայացքում կատարվեց շրջադարձային փոփոխություն: Կյանքին, սիրուն և արվեստին հավատացող լավատես բանաստեղծը դառնում է հոռետես, դժգոհ, Աստծուն չապավինող. պատճառն արդուլիամիդյան բռնապետությունն էր:

1896 թ. Թևֆիք Ֆիքրեթը, ում բանաստեղծություններն արդեն մեծ ժողովրդականություն էին վայելում, Ռեջաիզադե Մահմուդ էրբենի հրավերով տեղափոխվեց «Սերվեթ-ի ֆյունուն» հանդես՝ ստանձնելով գլխավոր խմբագրի պաշտոնը: Կարճ ժամանակահատվածում Ֆիքրեթն իր շուրջը համախմբեց թուրք գրականության՝ ժամանակի լավագույն ուժերին. Հալիք Ջիյա Ուշաքլըզլի, Իսմաիլ Սաֆա, Ալի էրբեն Բուլաքը, Ջենափ Շահարեթթին, Հուսեյին Ջահիթ Յալչըն, Մեհմեթ Ռ-աուֆ և այլք: Ֆիքրեթը խմբագրում էր բոլոր ստեղծագործություններն ու հոդվածները, վարում «գրական զրույցների» առանձին շարք, կատարում էր նաև որոշ պատկերագրություններ:

Լինելով գրական, գիտահանրամատչելի հանդես՝ «Սերվեթ-ի ֆյունունը» քաղաքական հրապարակախոսություն չէր պարունակում¹⁶: Բայց անգամ մնան քաղաքականապես պասիվ գրական խմբակը շատ վտանգավոր էր դիտվում արդուլիամիդյան վարչակարգի և վերջինիս գրաքննության կողմից: 1899 թ. սկսած «վնասակար գրքերի» ցուցակում հայտնվում են նաև սերվեթիֆյունունականների ստեղծագործությունները¹⁷, իսկ 1901 թ. սուլթանական կառավարության հրամանով փակվում է «Սերվեթ-ի ֆյունուն» հանդեսը: Ֆիքրեթը բաժանվում է հանդեսից, հեռանում գրական միջավայրից և պարփակվում իր ներաշխարհում: Նա գալիս է այն համոզման, որ անհրաժեշտ է պայքարել սուլթանական վարչակարգի դեմ և իր պոեզիան ծառայեցնում է այդ գործին՝ գրելով «Մառախուղ» («Sis»), «Եթե բացվի առավոտը» («Sabah olursa»), «Հին պատմություն» («Tarih-i Kadim»), «Հապաղման մի ակնթարթ» («Bir Lâhza-i Te'ahhur») ստեղծագործությունները: Ինչպես նշում է Սաբիհա Սերթելը՝ Թևֆիք Ֆիքրեթը երկրի բարեկեցությունն ամենից առաջ տեսնում էր սուլթանության անկման՝ սուլթանի ինստիտուտի վերացման մեջ, և ինչպես մի խոռվարար՝ բռնապետության ամենահուժկու դարաշրջանում խիզախություն էր ցուցաբերում բանաստեղծություններ գրել փառիշահի դեմ¹⁸:

1908 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը: Հեղաշրջման խնորման ժամանակահատվածում թուրքական զինված ուժերում առաջ էին եկել ընդհատակյա խմբեր, որոնք պատրաստում էին ապստամբություն՝ ընդդեմ սուլթանական բռնապետության: Խորհրդային արևելագետ Ռ.

16 Տե՛ս Ибрагимов А. Х., Печать Турции, Москва, 1965, стр. 10; Петросян Ю. А., Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII- начало XX в.), Москва, 1985, стр. 113.

17 Տե՛ս Karal E. Z., Osmanlı Tarihi, cilt VIII, Ankara, 1962, s. 414.

18 Տե՛ս Sabiha Serter, Tefvik Fikret, İdeolojisi ve Felsefesi, İstanbul, 1946, s. 26.

Ֆիշը գրում է, որ 1908 թ. ամռան մի գիշեր Մակեդոնիայում¹⁹ գործող ընդհատակյա խմբի մի քանի անդամներ եկել էին Թևֆիք Ֆիքրեթի տուն՝ «հեղափոխական հիմն գրելու խնդրանքով»²⁰: Մինչև հեղաշրջումը երիտթուրքերը խոսում էին երկրի բոլոր ժողովուրդների եղբայրության, բարեկամության, նրանց շահերի ընդհանրության մասին: Այս դրույթների վրա էր հիմնված նաև Ֆիքրեթի քաղաքացիական պոեզիան: Ուստի պատահական չէ, որ բանաստեղծը մեծ հույսեր էր կապում «հեղափոխության հաղթանակի հետ», որոնք, իհարկե, չարդարացան: Ոգևորված հեղափոխական գաղափարներով նա գրում է «Ազգի երգը» («Millet Şarkısı»), որով երիտթուրքերը մտան Ստամբուլ.

Millet yoludur, hak yoludur tuttuğumuz yol
Ey hak, yaşa, ey sevgili millet, yaşa... var ol²¹!

Մեր բռնած ուղին ազգային ճանապարհն է, ճշմարտության²² ճանապարհն է, Կեցցե՛՛ ճշմարտությունը, կեցցե՛՛ սիրելի ազգը, կեցցե՛՛...ապրի՛ր հավետ:

Ըստ Ֆիքրեթի՝ երկրում ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է «միավորվել ազգովի»: Բանաստեղծության լեզվով նա գիտելիք է տալիս ժողովրդին, արմատավորում հեղափոխական գաղափարներ: «Ազգի երգը» բանաստեղծությանը հաջորդում է Ֆիքրեթի նոր ստեղծագործությունը՝ «Հայրենիքի երգը» («Vatan Şarkısı»), որում շարունակում է իշխել հայրենասիրության, ազգի մեծարման ոգին²³: Բանաստեղծը պահպանում և ընդգծում է գալիքի նկատմամբ իր հույսը: Հիասթափված քաղաքական խարդավանքներից՝ նա, այնուամենայնիվ, հավատում է երկրի կենսական ուժերի վերածնությանը:

Ինչպես իրավացիորեն նշել են երիտթուրքական հեղաշրջման մասին խորհրդային հետազոտողները, այդ թվում՝ խորհրդահայ պատմաբանները, սուլթան Աբդուլ Համիդի իշխանության տապալումն իսկապես մեծ տոն էր օսմանյան հանրաբանտի բոլոր ժողովուրդների համար²⁴: Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը գրում է. «Ժողովրդի ճնշված ու ընչազուրկ զանգվածներն անձկությամբ կյանքի պայմանների բարելավում էին ակնկալում: Ալբաններն ու մակեդոնացիները, հայերն ու արաբները, բոլոր արհամարհված ու ոտնահարված ազգությունները սեփական երկրում ապահով ապրելու, իրավունքներ նվաճելու երազանքներ էին փայփա-

19 1908 թ. առաջին կեսին Մակեդոնիան Օսմանյան կայսրության այն շրջանն էր, որտեղ ազգային հակասությունները դրսևորվում էին առանձնահատուկ սրությամբ: 1908 թ. հունիսին նորից ծագեց Մակեդոնիան Օսմանյան կայսրությունից անջատելու սպառնալիքը: Այդ ժամանակաշրջանում երիտթուրքական շարժման գործիչները որոշեցին անցնել բանակի միջոցով հակակառավարական ելույթի անհապաղ նախապատրաստությանը՝ զենքի ուժով սահմանադրության վերականգնմանը հասնելու և կայսրության գործերին օտարերկրյա միջամտությանը խոչընդոտելու համար: Ավելի մանրամասն տե՛ս Петросян Ю. А., Младотурецкое движение (вторая половина XIX-начало XX вв.), Москва, 1971, стр. 279-308.

20 Տե՛ս Фиш Р., Турецкие дневники, Встречи, размышления, Москва, 1977, стр. 54.

21 Տե՛ս Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Millet Şarkısı, İstanbul, 2005, s. 311.

22 Hak բառն ունի նաև ճշմարիտ, իրավունք, արդարություն, արդարացի իմաստները:

23 Տե՛ս Fikret Tevfik, Rübâb-ı Şikeste, Vatan Şarkısı, s. 314-315.

24 Տե՛ս Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), стр. 109-117; Кондакчян Р. П. Турция: внутренняя политика и ислам, Ереван, 1983, стр. 34; Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Եր., 1982, էջ 250, Սիմոնյան Զ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 126-139:

յուն»²⁵: Թուրք լրագրող, հասարակական գործիչ Սաբիհա Սերթելի կարծիքով 1908 թ. «հեղափոխությունը», ամեն դեպքում, մեծ քայլ էր «ժողովրդական հեղափոխության» հասնելու ճանապարհին²⁶:

Հեղաշրջումից անմիջապես հետո Թևֆիք Ֆիքրեթը գրող, թարգմանիչ ու խմբագիր Հուսեյն Ջահիդի հետ միասին ձեռնամուխ եղավ «Tanin» («Արձագանք») թերթի հրատարակման գործին²⁷: «Թանին» թերթում գրական գործունեություն սկսեց ծավալել ժամանակի հայտնի գրող Հալիդե Էդիփը: Այդ ժամանակաշրջանում «Թանին» ամենատարածված թերթերից մեկն էր Օսմանյան կայսրությունում: Ընթերցողները տեղեկանում էին երկրի նոր կյանքի, «հեղափոխության» հետագա զարգացումների մասին: Ֆիքրեթն իր ողջ ստեղծագործական ներուժը տվել էր թերթին, գրում էր «հեղափոխական հայրենիքը» գովերգող բանաստեղծություններ, խանդավառությամբ ողջունում նոր ժամանակաշրջանը²⁸: Նա կարծում էր, որ «հեղափոխություն» իր հետ ազատություն էր բերելու, ինչն էլ իր հերթին «նոր մարդկության», «նոր ու մաքուր սերնդի» հիմք է դառնալու²⁹: Հետագայում այս ոգով գրված բանաստեղծություններից շատերը ընդգրկվեցին հեղինակի որդուն նվիրված «Հալուքի տետրը» («Halok'un Defteri») ժողովածուի մեջ: Նրանում Հալուքը հանդես էր գալիս որպես ժամանակի երիտասարդության մարմնավորում. հանձին իր որդու՝ պոետը մեծ հույսեր էր կապում նոր սերնդի հետ: Նույնիսկ կյանքի վերջին տարիներին Ֆիքրեթը մտադիր էր հրատարակել «Հույս և վճռակնություն» անունով հանդեսը, որն ուղեցույց կհանդիսանար երիտասարդության համար: Բայց այն լույս չտեսավ Ֆիքրեթի հիվանդության պատճառով:



Թևֆիք Ֆիքրեթը և իր որդին Հալուքը

Գերազանց գեղագիրը «Հալուքի տետրը» ժողովածուն հրատարակեց 1911 թվականին՝ դրա մեջ գետեղելով լավաստեսությամբ լեցուն իր բանաստեղծությունները, որոնցում հայրենիքի երջանիկ ապագայի և ճակատագրի նկատմամբ բանաստեղծն արտահայտել է իր պայծառ տրամադրությունները: Այս առումով հիշարժան են «Հալուքի հավատամքը» («Haluk'un Âmentü'sü»), «Հալուքի հրաժեշտը» («Haluk'un Vedâ'ı»), «Ծագող արևին» («Doğan güneş'e»), «Վաղը» («Ferdâ») բանաստեղծությունները: Բանաստեղծ ու մանկավարժ Թևֆիք Ֆիքրեթն իր ստեղծագործություններով փորձում էր դաստիարակել առողջ մտածելակերպ ունեցող սերունդ, որը կկարողանար կյանքի կոչել ազատ, անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիվ ապրելու իր իրավունքը և որակապես նոր մակարդակի հասցնել նախորդների ժառանգությունը: Նա պատմության նոր ժամանակաշրջանի բացումը, հայրենիքի հույսն ու ապագան կապում էր երիտասարդության հետ, որի պատվի գործն է վերափոխել կյանքը՝ զգուշացնելով նրան, որ ապագան այսօրվանից է հաշիվ պահանջելու: Թևֆիք Ֆիքրեթն առավել քան համոզված էր,

25 Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 250- 251:

26 Տե՛ս Sertel Sabiha, նշվ. աշխ., էջ 36.

27 Տե՛ս Kutlu Şemsettin, “Tevfik Fikretin son yılları”, “Hayat Tarih mecmuası”, İstanbul, Eylül 1970, sayı 8, s. 27.

28 Տե՛ս Akay Hasan, Tevfik Fikret, 2007, s. 80.

29 Տե՛ս Ahmet Hamdi Tanpınar, Tevfik Fikret, Hayatı, Şahsiyeti, Şiir ve Eserlerinden parçalar, İstanbul, 1944, s. 15.

որ մարդկությանը միավորող, նախապաշարմունքներից ազատող ուժը կրթությունն ու գիտելիքն են և հույս էր հայտնում, որ մի օր իր երկրում կիշխի իմացության ուժը: Ըստ հեղինակի՝ նեղություններին ու դժվարություններին դիմացողը, գաղափարի հետևից գնացողը, վաղ թե ուշ կհասնի իր նպատակին.

Koşan elbet varır; düşen kalkar;
Kara taştan su damla damla akar,
Birikir, sonra bir gümüş göl olur;
Arayan hakkı en sonunda bulur...³⁰

Վազողը, իհարկե, հասնում է, ընկնողը՝ վեր ելնում,
Սև քարից ջուրը կաթիլ-կաթիլ հոսում է,
Հավաքվում, հետո մի արծաթե լիճ է դառնում,
Փնտրողը ճշմարտությունն ամենավերջում է գտնում:

«Հայուքի տեսարը» գրքում «Կոտրված քնարի» հեղինակի նախկին հոգեվիճակն ու աշխարհայացքը լիովին փոխվել էին: Այդ տարիներին Ֆիքրեթն ազատվել էր իրեն կեղեքող միայնության զգացումից և միացել էր հասարակության ամենաաշխույժ շերտը հանդիսացող երիտասարդությանը: Սակայն նրա հույսերը չարդարացան: Երիտթուրքերը հակված չէին իրականացնել սեփական խոստումները: Սահմանադրության վերականգնումից հետո նրանք թույլ չտվեցին, որ միապետության դեմ հեղափոխական պայքարը ծավալվի և շարունակեցին ոտնահարել կայսրությունում ապրող ժողովուրդների իրավունքները՝ մոռանալով իրենց խոստացած ազատության, հավասարության և եղբայրության մասին: Շրջանցելով սոցիալական բարեփոխումներ իրականացնելու խնդիրը, հանդես գալով ժողովրդական զանգվածների սոցիալական ձգտումների դեմ՝ երիտթուրքերն արագ կորցրին հեղաշրջման արդյունքում ձեռք բերած ժողովրդականությունն ու հեղինակությունը:

Օսմանյան կայսրության առաջադեմ մարդիկ, այդ թվում և Թաֆիք Ֆիքրեթը հասկացան, որ երիտթուրքերը խաբել են իրենց: Վերջնականապես համոզվելով, որ այլևս չի կարող ստանձնել «Թանին» թերթի խմբագրությունը և համագործակցել երկրի նոր քաղաքական ղեկավարության հետ՝ նա հեռացավ խմբագրությունից: Սակայն բանաստեղծի հեղինակությունը մեծ էր, ուստի երիտթուրքերը պաշտոններ տալու միջոցով ցանկանում էին լռեցնել նրա ձայնը: Մասնավորապես, երիտթուրքերը Ֆիքրեթին առաջարկում են լուսավորության նախարարի պաշտոնը, սակայն նա հրաժարվում է: Այնուհետև իշխանությունները բանաստեղծին առաջարկում են ղեկավարել Գալաթասարայի լիցեյը՝ խոստանալով չմիջամտել նրա գործերին: Ֆիքրեթն անմիջապես ձեռնամուխ է լինում լիցեյի բարեփոխմանը:

Մինչև Առաջին աշխարհամարտի մեջ մտնելը Օսմանյան կայսրությունը լուրջ ցնցումներ ապրեց տրիպոլիտանական և բալկանյան պատերազմների հետևանքով: 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող աֆրիկյան երկու երկրամասերը՝ Տրիպոլիտանիան և Կիրենաիկան դարձան իտալական գաղութներ: Իտալա-

30 Տե՛ս Tevfik Fikret, Halûk'un Defteri, Halûk'un Vedâ'ı, İstanbul, 2006, ss. 41-42.

թուրքական հաշտությունը կնքելու օրը սկսվեց առաջին բալկանյան պատերազմը՝ մի կողմից Օսմանյան կայսրության, մյուս կողմից՝ բալկանյան պետությունների՝ Բուլղարիայի, Հունաստանի, Սերբիայի և Չեռնոգորիայի կոալիցիայի միջև³¹։ Երիտթուրքերի ռազմական անհաջողություններից օգտվեցին նրանց հակառակորդները՝ 1911 թ. ստեղծված «Ազատություն և համաձայնություն» («Hürriyet ve İtilaf») կուսակցության գլխավորությամբ։ 1912 թ. իթիլյաֆականները հասան այն բանին, որ հրաժարական տվեց երիտթուրքերի վերահսկողության տակ գտնվող կառավարությունը։ Շուտով նրանց հաջողվեց ցրել նաև խորհրդարանը³²։ Մեջլիսը փակելը Ֆիքրեթին հիշեցնում էր 1878 թ. (հիջրայի՝ 1295 թ.) Աբդուլ Համիդի կողմից խորհրդարանի ցրումը։ «Ուրեմն ազգը 33 տարի իզուր է նեղություն կրել, հեղափոխության սպասել, ապա բախվել ազատագրողների դավաճանությանը։ Ուրեմն ոչինչ չի փոխվել։ Նույնությամբ շարունակվում է³³», -գրում էր բանաստեղծը։ Իսկ ահա «Դեպի իննսունհինգը» բանաստեղծության մեջ նա կրկնում էր. «Ափսոս, երեսուներեք տարիներ...» («Heyhat! Otuz üç yıl... »)³⁴։ Չայրույթով ու ատելությամբ լցված Ֆիքրեթը նշում էր, որ իշխանավորները, աթոռակալով տալով, մոռացել են ազգի, ազատության, օրենքի ու խղճի մասին («Դեպի իննսունհինգը/ Իննսունհինգի վերադարձը» («Doksan Beşe Doğru»), «Գահընկեց արված փաղիչահի պատուհանը» («Revzen-i Mahlu»), «Քնարի պատասխանը» («Rubabın Cevabı»), «Գողացած ճաշի սեղան» («Hân-ı Yağma») և այլն)։ Ինչպես նկատում է թուրք գրականագետ Մեհմեթ Քափլանը, այդ շրջանում Ֆիքրեթը խոսում է սոցիալական հարցերին կարևորություն տալու անհրաժեշտության մասին և ամբողջությամբ նվիրվում սոցիալական թեմաների արծարծմանը³⁵։

Իր կյանքի վերջին տարիներին Ֆիքրեթը սկսում է գրել երեխաների համար։ Ու չնայած նրան վիրահատում են³⁶, բայց չի դադարում ստեղծագործել և գրում է մանկական բանաստեղծություններ, որոնցով փորձում է ուղղորդել Օսմանյան կայսրության ապագա քաղաքացիներին դեպի բնություն, սեր արթնացնել նրանց մոտ կրթության, գրքի, արդար աշխատանքի նկատմամբ։

Մահվանից մեկ տարի առաջ՝ 1914 թվականին, հրատարակվեց նրա «Շերմինը» («Şermin») մանկական բանաստեղծությունների ժողովածուն։ Երեխաներին ուղղված այս ժողովածուն Ֆիքրեթը վերնագրեց վաղամեռիկ քրոջ աղջկա՝ փոքրիկ Շերմինի անունով։ Գրքում տեղ գտած բանաստեղծությունների մի մասը նա գրել է հենց Շերմինի, իսկ մյուս մասը՝ «Յուվա» դպրոցի երեխաների համար։ Այն հիմնադրել էր Թևֆիք Ֆիքրեթի մտերիմ մանկավարժ Մուստաֆա Մաթի Բեյը, իսկ դպրոցի անունը Ֆիքրեթն ինքն էր դրել «Յուվա», որը թարգմանաբար նշանակում

31 Առավել մանրամասն տե՛ս Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), с. 210-227.

32 Պատերազմում պարտություն կրելով՝ երիտթուրքերը իրենց ղեկավար մարմինը տեղափոխեցին Սալոնիկ։ Բալկանյան պատերազմում անհաջողությունների հետևանքով բողոքի մեծ ալիք բարձրացավ Օսմանյան կայսրության ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ նահանգներում։ Դրանից օգտվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը՝ փորձելով նոր հեղաշրջում իրականացնել։ 1913 թ. հունվարի 23-ին մոտ 200 սպա՝ երիտթուրքերի պարագլուխներ Էնվեր բեյի և Թալեթ բեյի գլխավորությամբ, շրջապատեցին Բարձրագույն դռն շենքը, ներխուժեցին կառավարության նիստերի դահլիճ, սպանեցին ռազմական նախարարին ու նրա համարակցներին, բանտարկեցին մեծ վեզիր Զյամիլ փաշային և մի քանի նախարարների։ Նոր կառավարությունը կազմվեց «Միություն և առաջադիմության» կողմից՝ երիտթուրքերի դրածո Մահմուդ Շեքեթ փաշայի գլխավորությամբ։

33 Tevfik Fikret, Son Şiirler, 1968, İstanbul, s. 25

34 Նույն տեղում։

35 Տե՛ս Kaplan Mehmet, Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser, İstanbul, 2007, s. 177.

36 Խորհրդային թուրքագետ Ռ. Ֆիշը գրում է, որ Ֆիքրեթի աջ ձեռքն անդամահատվում է և նա սկսում է գրել ձախ ձեռքով։ Ավելի մանրամասն տե՛ս Фиш Р., Писатели Турции-книги и судьбы, с. 17.

է «բույն», «օջախ»։ «Յուվան գբության բույն է» («Yuva şefkat yuvasudur»)՝³⁷, այսպես է Թևֆիք Ֆիքրեթը բնութագրել «Յուվա» դպրոցն իր բանաստեղծություններից մեկում։ «Շերմինը» ժողովածուում երեխան ծանոթանում է իրականության հետ, փորձում ճանաչել աշխարհը, գտնել բազմաթիվ «ինչուների» պատասխանը։ Ֆիքրեթը լավ էր գիտակցում, որ երեխաների հասունացման, իմացական շրջանակների ընդլայնման, ունակությունների մշակման գործում կողմնորոշիչ դեր է խաղում մանկական գրականությունը, իսկ առաջին օգնականներից ու խորհրդատուներից մեկը պետք է դառնա գիրքը։ Եթե այս ժողովածուի ստեղծագործություններն էապես տարբերվում են նախորդ՝ «Հալուքի տետրը» ժողովածուից իրենց լեզվով ու տաղաչափությամբ, ապա գաղափարական տեսանկյունից դրանք շատ մոտ են իրար և հանգում են «նոր մարդու տեսակի» («yeni insan tipi») դաստիարակման գաղափարին։

Թևֆիք Ֆիքրեթը երազում էր հիմնել «Նոր դպրոց» («Yeni Mektep») անունով ուսումնական հաստատություն։ Սակայն չկարողանալով իրականացնել այդ նպատակը՝ նա իր գաղափարներից շատերը փորձեց կյանքի կոչել Գալաթասարայի լիցեյում։ «Նոր դպրոց»-ի նպատակը երեխաներին գործնական կյանքին պատրաստելն էր։ Ինչպես անգլո-սաքսոնական դպրոցներում, այնպես էլ այստեղ մեծ տեղ էր տրվելու սպորտին ու ձեռքի աշխատանքին։ Այսինքն՝ «Նոր դպրոց»-ը կոչված էր պատրաստելու ոչ թե գիտնականներ ու տեսաբաններ, այլ «կյանքի մարդիկ»՝ պրագմատիկներ։ Այս «նոր մարդու տեսակի» կյանքում միստիկական զգացմունքների համար տեղ չէր մնալու, քանզի վերջինիս տեղը գրավելու էր «կյանքի գիտելիքը» («hayat bilgisi»)՝³⁸։

«Շերմինը» ժողովածուում տեղ գտած բանաստեղծությունների մեծամասնության մեջ իշխում են հենց այս գաղափարները։ Ուստի պրոֆեսոր Աբդուլլահ Ուչմանը նկատում է, որ Թևֆիք Ֆիքրեթի «նոր մարդու տեսակը» համապատասխանում է ժամանակակից ամերիկացու կերպարին, որը վճռական է, գործույնա ու պրագմատիկ, նախաձեռնող ու ձեռներեց, կյանքում կարևորում է ձեռնտուն, շահեկանն ու օգտակարը։ Օսմաներենում կիրառվող «amelî» բառն իմաստային առումով արտահայտում է ժամանակակից թուրքերենի «pratik» բառի իմաստը՝³⁹։

Թևֆիք Ֆիքրեթն իր գերխնդիրն էր համարում վաղ հասակից երեխային կյանքի դասեր տալը։ Ուստի իր բանաստեղծություններում գրում էր բնության, հայրենիքի, ազգի, մարդկության հանդեպ սիրո ու հարգանքի մասին, խորհուրդ տալիս օգնել ծերերին, ընկերությունը կառուցել ողջ կյանքի համար՝ ընկերոջ հետ կիսելով թե՛ ուրախությունն ու հաջողությունը և թե՛ տխրությունն ու անհաջողությունը (հիշարժան են «Հյուն» («Marangoz»), Բորո/Բոխուլ («Umacı»), «Որբը» («Öksüz»), «Գարուն վարպետը» («Bahar Kalfa»), «Երիցուկ» («Papatya») բանաստեղծությունները)։

«Շերմին» ժողովածուն դարձավ Թևֆիք Ֆիքրեթի հրատարակած վերջին գիրքը։ Նրա մանկական պոեզիան իր լուսավոր գաղափարներով, ճանաչողական ու դաստիարակչական նշանակությամբ, ժանրային բազմազանությամբ բացառիկ երևույթ է թուրք գրականության մեջ։ Ֆիքրեթը վախճանվեց շաքարախտից՝

37 Տե՛ս Tevfik Fikret, Şermin, İthâf, İstanbul, 2005, s.3.

38 Ֆիքրեթի «Yeni Mektep»-ի կիրառական կրթության նպատակների ու մեթոդների մասին առավել մանրամասն տե՛ս Nigâr Salih Keramet, Tefvik Fikret, İnkılâp Şâirinin İzleri, İstanbul, 1942, ss. 64-74.

39 Տե՛ս Uçman Abdullah, Tefvik Fikret, Şermin, İstanbul, 2005, ss. IX-X.

1915 թ. օգոստոսի 19-ին⁴⁰:

2. «Սերվեթ-ի ֆյունուն» գրական շարժումն իբրև պատմամշակութային ֆենոմեն



Իսթանբուլի Գեզնեի (Սերվեթ-ի ֆյունուն) շրջանը, 1915 թ. օգոստոսի 19-ին

«Սերվեթ-ի ֆյունուն» հանդեսի պատկերազարդ համարը

Էր հրավիրում տարբեր հեղինակների: Թերթը նեժ ժողովրդականություն չէր վայելում ընթերցողների շրջանում: 1891 թ. Նիկոլաիդիսը փոխեց նրա ձևաչափը և արդեն տասնվեց էջից բաղկացած թերթը լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ: Այն կիսապաշտոնական էր և ուներ ժամանցային բնույթ: Գրեթե կեսը տպագրում էր տեղեկություններ պաշտոնների նշանակման, կոչումների ու պե-

թևաֆիք Ֆիքրեթի խմբագրությանը հրատարակվող «Սերվեթ-ի ֆյունուն» հանդեսն իրավամբ նոր էջ բացեց 19-րդ դարի երկրորդ կեսի թուրքական գրականության մեջ: Այն դարձավ թուրք գրականության արդիականացման և «արևմտականացման» («garp-çilik») միջոց:

1880-1890-ական թթ. հանդեսը հրատարակվում էր իբրև «Servet» («Հարստություն») թերթ: 1888 թվականին այն հիմնադրել էր ստամբուլցի հույն Գ. Նիկոլաիդիսը: Սկզբնական շրջանում «Սերվեթն» իրենից հետաքրքրություն էր ներկայացնում որպես թուրքերենով լույս տեսնող առաջին երեկոյան թերթը Ստամբուլում: Հատկանշական է, որ թերթի հիմնադիրը հազիվ էր խոսում թուրքերեն, ուստիև համագործակցության

40 Ժամանակակիցների վկայությանը՝ կյանքի վերջին օրերին Թևֆիք Ֆիքրեթի կողքին է եղել նաև հայագի բժիշկ և ղեղազոր թերզյանը, տե՛ս Kutlu Şemsettin, “Tevfik Fikretin Son Yılları”, “Hayat Tarih Mecmuası”, İstanbul, 1 Eylül 1970, Sayı 8, s. 29: Ակոր (Չաղդեր) Թերզյանի մասին տե՛ս Yarmar Arsen, Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Sürb Prgic Ermeni Hastanesi Tarihi, İstanbul, 2001, s. 308: Ֆիքրեթի մահից հետո նրա առանձնատունը՝ Աշիյանը, որտեղ ապրել է 1906-1915 թթ., վերածվում է թանգարանի, որը նվիրված էր ոչ միայն իրեն, այլև թուրք նոր գրականությանը (Edebiyat-ı Cedide Müzesi): 1961 թ. Ֆիքրեթի աճյունը Եյուփի գերեզմանատնից տեղափոխվում է Աշիյան, թաղվում իր տան դիմաց: Այդ տարվանից տուն-թանգարանը վերանվանվում է «Աշիյան թանգարան» (Aşiyan Müzesi): Ներկայումս այգու ներսում գտնվող եռահարկ տան կիսանկուղային հարկն օգտագործվում է վարչական նպատակներով: Առաջին հարկը նվիրված է թուրք նոր գրականության «Սերվեթ-ի ֆյունունի» ներկայացուցիչներին: Այստեղ տեղ են գտնվել Աբդուլխաթ Չամիթին և Նիզար Չանըմին նվիրված սրահները: Երկրորդ հարկն ամբողջությամբ նվիրված է Թևֆիք Ֆիքրեթին: Ներկայացված են բանաստեղծի ննջատեղի և աշխատասենյակը: Այստեղ են պահվում նաև նրա անձնական իրերն ու ձեռագրերը:

100 հարյուրամյակի 2011

Գ. (Թ) Գրեթե կեսը համահայկական հանդես

տական պարզևների շնորհման մասին, ինչպես նաև թղթակցություններ արտերկրից: Թերթի որոշ մասը զբաղեցնում էին Ժյուլ Վեռնի արկածային վեպերի թարգմանությունները, տեղեկություններ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած առանձին իրադարձությունների մասին, հայտարարություններ ու զովագր: 1891 թ. սկզբին Նիկոլաիդիսն իր թերթի համար հավելված հրատարակելու թույլտվություն է ստանում, որը կոչում է «Սերվեթ-ի ֆյունուն»: Սկզբնական շրջանում Նիկոլաիդիսը հավելվածի հրատարակումը հանձնարարում է Ահմեդ Իհսան Թոքգյուզին, ում իրավամբ կարելի է համարել «Սերվեթ-ի ֆյունուն»-ի հիմնադիրը: Հանդեսի առաջին համարը լույս է տեսնում 1891 թ. մարտի 17-ին: Սկզբնական շրջանում այն ուներ գիտահանրամատչելի բնույթ: Տպագրվում էին տեղեկություններ հանրահայտ մարդկանց կյանքից, հողվածներ Արևմուտքում գիտության ու տեխնիկայի ձեռքբերումների մասին, ինչպես նաև՝ տնտեսագիտությանն ու բժշկությանը վերաբերող նյութեր: Մեծ տեղ էին զբաղեցնում եվրոպական, մասնավորապես՝ ֆրանսիական գրականությունից կատարված թարգմանությունները: Երբեմն կարելի էր հանդիպել նաև ռազմական բնագավառին վերաբերող հոդվածների: Այդ շրջանում թուրքական պարբերական մամուլի մեջ նորություն էին «Սերվեթ-ի ֆյունունի» էջերում տեղ գտած պատկերագրողումները, որոնց շնորհիվ էլ հանդեսը գրավեց պալատական վերնախավի ուշադրությունը: Հանդեսի տպագրությունից շատ չանցած՝ սուլթանի հրամանով նրա համար հատկացվեց ամսական 3240 դուրուշ: Արդուլ Համիդի անձնական ցուցումով հանդեսում տպագրվեցին մի շարք պատկերագրողումներ (иллюстрация), որոնք, նրա կարծիքով, ապացուցելու էին Օսմանյան կայսրության հավատարմությունն իսլամի վրա խարսխված հին ավանդույթներին ու բարոյական հիմքերին: Նման պատկերագրողումների շարքում հայտնվեցին միջնադարյան ճարտարապետության հուշարձանների, մզկիթների, մեդրեսեների, մահմեդական սրբերի գերեզմանների նկարներ և այլն: Բացի այդ, սուլթանը հանդեսը փորձում էր օգտագործել որպես «երկխոսության» ինքնատիպ գործիք՝ իր և եվրոպական երկրների հարաբերություններում: Սուլթանի ցանկությանը նրանում տպագրվում էին արտերկրի մամուլում սուլթանի դեմ լույս տեսած հրապարակումների «պատկերագրող պատասխաններ»: Այսպես, «Սերվեթ-ի ֆյունունի» էջերում հայտնվեցին «Փարիզում ռատիկանի սպանությունն անարխիստի կողմից» պատկերագրողումը՝ ի պատասխան եվրոպական մամուլի այն հոդվածների, որոնք պատմում էին Ստամբուլում տեղի ունեցած զինված կողոպուտի մասին, ինչպես նաև «Հռոմի պապը՝ Վատիկանի բանտարկյալ» նկարը ի պատասխան այն հոդվածների, որոնցում նշվում էր, որ սուլթանը դուրս չի գալիս իր պալատից և այլն⁴¹:

Թուրքական մյուս հանդեսների մման այստեղ ևս տպագրվում էին տարբեր գրական ուղղությունների ու հայացքների տեր հեղինակների հոդվածներ: Միայն 1896 թ. սկզբին, երբ Ֆիքրեթը ստանձնեց հանդեսի պատասխանատվությունը, գերակշռող դարձան արևմտյան ուղղության երիտասարդ հեղինակների գործերի հրապարակումները: Կարճ ժամանակաշրջանում «Սերվեթ-ի ֆյունունի» հեղինակությունն այնքան է աճում, որ նրանում սկսում են տպագրվել մի շարք այլ պարբերականների («Mekteb», «Hazine-i Fünun», «Malumat») աշխատակից-գրողները:

41 Стів Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729- 1908 гг.), Москва, 1972, с. 229-230.

Սկսած 256-րդ համարից (1896 թվականի փետրվարի 7) «Սերվեթ-ի ֆյունուն» հանդեսը ձեռք բերեց առավելապես գրական ուղղվածություն: Պարբերականի էջերում քարոզվում էին Արևմուտքի ազատամիտ գաղափարները՝ ի հակադրություն օսմանյան ֆեոդալական հասարակարգի պահպանողական ավանդույթների: Հանդեսի էջերում երբեմն առկայծել են նույնիսկ մարքսիստական որոշ գաղափարներ⁴²:

Սերվեթի ֆյունունականները եկան հաջորդելու թանգիմաթականներին: Թուրք գրականագիտության մեջ հանդիպում ենք նաև «Սերվեթ-ի ֆյունունի գրականության» («Servet-i Fünun Edebiyatı»)՝⁴³ այլ անվանումներ՝ «Edebiyat-ı Cedide», «Yeni Edebiyat-ı Cedide» (նոր գրականություն): Այս վերջինը կիրառվում էր գրաքննադատների կողմից «Սերվեթ-ի ֆյունունի» գրական խմբակը Իբրահիմ Շինասու, Նամըք Քեմալի, Ջիյա Փաշայի, Աբդուլհաք Համիդի, Ռեջափաղե Մահմուդ Էքրեմի ստեղծագործություններից առանձնացնելու համար⁴⁴:

«Սերվեթ-ի ֆյունունի գրականությունը» ծնունդ է առել, զարգացել և իր վախճանն ապրել Աբդուլ Համիդ երկրորդի (1876-1909) բռնապետական վարչակարգի՝ «գուլումի» ժամանակաշրջանում: Այսինքն՝ գրական այս ուղղությունը գործել է բռնապետության ճնշման ներքո: Նշված դարաշրջանը բնութագրվում է նաև արդուլիամիդյան բացառիկ դաժան, երբեմն անհեթեթության հասնող գրաքննությանը: Թուրք պատմաբան Է.Քարալը, բնութագրելով արդուլիամիդյան վարչակարգը, գրում է, որ ամենուր կարելի էր հանդիպել լրտեսների, հատուկ գործակալների: «Լրտեսությունը բռնապետական վարչակարգի ոգին էր»,- գրում է Քարալը⁴⁵: Գրող Հալիթ Ջիյա Ուշաքըզիլը պատմում է, որ «Ստամբուլի մութ փողոցները քարացել էին վախից, և քաղաքի մի անկյունից մյուսը տեղափոխվելու համար մեծ խիզախություն էր հարկավոր: Բոլորը վախենում էին միմյանցից»⁴⁶: Արդուլիամիդյան գրաքննությունը թույլատրում էր միայն «անմեղ» գեղարվեստական գրականություն, ներբողական ելույթներ և սուլթանին ու նրա քաղաքականությունը փառաբանող ստեղծագործություններ: Հիվանդագին կասկածամտությունը համակել էր սուլթանին, նա չէր վստահում ոչ ոքի: Արգելքի տակ էին դրվել Ռուստայի, Վուտերի, Շիլլերի, Շեքսպիրի, Ռասինի, Կռոնեյի, Հյուգոյի, Չոլայի, Տոլստոյի, Բայրոնի գրքերը: Գրաքննությունն արգելել էր եվրոպական թատերագրության դասականների շատ ստեղծագործություններ: Այդ պայմաններում խիստ արգելքի տակ էին նաև Նամըք Քեմալի, Ջիյա բեյի, Ալի Սուավիի, իսկ ավելի ուշ՝ Աբդուլհաք Համիդի և մի շարք այլ թուրք գրողների ստեղծագործությունները⁴⁷: Սուլթանը գրաքննության և խստագույն վերահսկողության էր ենթարկում նաև բոլոր ուսումնական հաստատությունները, անձամբ միջամտում էր դպրոցական գերատեսչության գործերին: Ազատամտության ամեն մի դրսևորում և «միտք արթնացնող» բոլոր առարկաներն անմիջապես հանվում էին ծրագրերից: Այդ ժամանակաշրջանի օսմանյան դպրոցներում շեշտակիորեն աճեց

42 Տե՛ս Желтяков А. Д., նշվ. աշխ., էջ 230.

43 Այս շրջանի թուրք գրականության մասին մանրամասն տե՛ս Kolcu Ali İhsan, Servet- i Fünun Edebiyatı, İstanbul, 2005; Parlatur İsmail, Enginün İnci, Karaca Alaattin, Servet- i Fünun Edebiyatı, İstanbul, 2006; Okay M. Orhan, Servet-i Fünun Şiiri, Erzurum, 1992; Akay Hasan, Tanzimat Sonrası Türk Edebiyatında Yeni Fikirler, İstanbul, 1998; Гордлевский Вл., Очерки по новой османской литературы, Москва, 1912, стр. 114-143.

44 Տե՛ս Edebiyat Ansiklopedisi, Milliyet , 1991, s. 299.

45 Karal E. Z., Osmanlı Tarihi, cilt VIII, Ankara, 1962, s. 265.

46 Алькаева Л. О., Творчество Халида Зии Ушаклыгиля, Москва, 1956, стр. 19.

47 Տե՛ս Желтяков А. Д., նշվ. աշխ., էջ 182.

կրոնական ազդեցությունը: Դասագրքերից հանվեցին հեղափոխության կամ հեղաշրջման մասին բոլոր արտահայտությունները: Արգելվեց «Համլետի» բեմադրությունը, որպեսզի ժողովուրդը չտեսներ միապետի մահը: Աբդուլհամիդյան գրաքննադատության կողմից կազմվել էր բառերի հատուկ ցուցակ, որոնք ենթակա չէին արտաբերման: Դրանք առաջին հերթին այն մարդկանց անուններն էին, որոնց սուլթանը համարում էր իր ռիսերիմ թշնամիները (օրինակ՝ Միդհատ փաշա, Նամըք Քենալ): Արգելված բառերի ցուցակում տեղ գտան «հեղափոխություն», «հեղաշրջում», «ինտերնացիոնալիզմ», «սոցիալիզմ», «անարխիզմ», «ազատություն», «հավասարություն», «հանրապետություն», «բռնակալություն», «բռնապետություն», «սահմանադրություն», «պատգամավոր», «սենատոր», «ընտրություն», «իրավունք» և նմանօրինակ այլ բառեր և արտահայտություններ: Միաժամանակ՝ այս արգելված բառերի կողքին հայտնվեցին «սպանություն», «մահափորձ», «թունավորում», «պայթում» բառերը: Գերմանացի գիտնական Ս. Բեքը գրում է, որ թուրք գրաքննիչը միշտ պահպանում էր հետևյալ կանոնը. «Եթե ես դա չեմ հասկանում, ավելի լավ է ջնջել»⁴⁸: Արգելված էին անգամ այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «ճաղատ», «անգավակ», «հրեշ» և այլն, քանի որ դրանք կարող էին սուլթանի համար անցանկալի զգացողություններ առաջացնել: Գրաքննությամբ նույնիսկ արգելվել էր կետադրական նշաններից՝ բազմակետը: Որպեսզի, ինչպես գրված էր հրամանագրում, «չխաթարվեր մտքերի հանդարտությունը», պետք էր խուսափել «շարունակելի» բառով ավարտվող վերջաբաններից՝ ընթերցողների մոտ «անառողջ» հետաքրքրություն չառաջացնելու համար⁴⁹: Թանգիմաթի և սահմանադրական շարժման տարիներին որոշակի հաջողությունների հասած լրագրությունը հետադիմում էր սուլթանական գրաքննիչների ջանքերով: Պակասեց թերթերի թիվը, իսկ պահպանված մի քանի հրատարակություններ տպագրում էին միայն սուլթանին ու Բարձր Դռանը հաճելի հոդվածներ⁵⁰: Թերթերը գրում էին միայն սուլթանի առողջության, թուրքական բանակի «հաղթանակների» և «լավ բերքի» մասին⁵¹:

Մինչդեռ, «Սերվեթ-ի ֆյունունի» գրողներն իրենց գրական ստեղծագործություններում քննադատում էին անբարոյականությունը, ֆանատիզմը, սոցիալությունը, թուրքական հասարակության բարոյական և սոցիալական արատները: Չնայած գոյություն ունեցող արգելքներին՝ շաբաթաթերթն իր ընթերցողներին ծանոթացնում էր համաշխարհային դասական գրականության հետ: Թարգմանվում և մեծ սեր էին վայելում մասնավորապես ֆրանսիական դասականների՝ Բալզակի, Դոդեի, Ժյուլ Վեռնի, Ֆլոբերի, Մոպասանի և այլոց գործերը: Բացի այդ, թարգմանվում էին նաև արևմտաեվրոպական գրականության այլ ներկայացուցիչների՝ Շիլլերի, Գյոթեի, Բայրոնի ստեղծագործությունները: 1891-1893 թթ. թարգմանվեցին Պուլշինի, Լերմոնտովի, մասամբ նաև՝ Տոլստոյի որոշ գործեր: Այս շրջանում թուրք ընթերցողները ծանոթացան Տուրգենևի արձակին, որոնք, սակայն, թարգմանվում էին ֆրանսերենից⁵²:

Սերվեթի ֆյունունականների յուրահատկություններից էր նրանց ծայրահեղ

48 Beck S., “Die Wirkungen der Aufhebung der Zensur in der Türkei”, “Orientalische Literaturzeitung” Bd I, H.I, Leipzig, 1908, s. 3-4.

49 Стѹ Фиш Р., Писатели Турции-книги и судьбы, Москва, 1963, с 22.

50 Стѹ Гасратян М. А., С. Ф. Орешкова, Ю. А. Петросян, Очерки истории Турции, Москва, 1983, с. 138-139.

51 Стѹ Фиш Р., նշվ. աշխ., էջ 21.

52 Стѹ Алькаева Л.О., Бабаев А., Турецкая литература, Краткий очерк, Москва, 1967, с.47.

զգացմունքայնությունը: «Սերվեթ-ի ֆյունունի գրականությունը» գլխավորապես զարգանում էր երկու թեմայի շուրջ. «երազանք-երևակայություն» («hayal») և «ճշմարտություն-իրականություն» («hakikat»)՝⁵³ այսինքն՝ բանաստեղծը, արձակագիրը, վիպասանը կա՛ն իրատեսորեն նկարագրում էր ճշմարտությունը, կա՛ն ընկնում երևակայության, երազանքների գիրկը: Երբեմն այս երկուսը համադրվում էին, որի արդյունքում հաղթում էր ճշմարտությունը՝ դառն իրականությունը: Գճմարտության և իրականության նկարագրությունը երբեմն սարսափելի հոռետեսության էր հասնում: Այդ է պատճառը, որ «Սերվեթ-ի ֆյունունի գրականության» մեջ տեղ էր գտնում ինքնասպանության թեման: Հատկանշական է, որ ինքնասպանության փորձեր եղել են գրողների կյանքում ևս: Այսպես, Մեհմեդ Ռ-ամուֆը սիրո հողի վրա ինքնասպանության փորձ է կատարում: Թևֆիք Ֆիքրեթն էլ մի քանի անգամ խոստովանել է, որ եթե չունենար կին և որդի, ինքն էլ ինքնասպան կլիներ՝⁵⁴:

«Սերվեթ-ի ֆյունունում» հրապարակվում էին նաև արվեստի և գրականության տեսական հարցերը լուսաբանող ուսումնասիրություններ: Թևֆիք Ֆիքրեթն իր հողվածներում հաճախ քննադատում էր «արվեստն արվեստի համար» սկզբունքը: Այս հարցում նրա հայացքները կիսում էր «Սերվեթ-ի ֆյունունի» գրողների մեծամասնությունը և պաշտպանում այն տեսակետը, որ գրականությունն ու արվեստն ունեն հասարակական նշանակություն: Ֆիքրեթը պնդում էր, որ «արվեստը չի կարող հասարակությունից պատնեշվել, չի կարող լինել արվեստագետի անձնական գործը»՝⁵⁵:

Իր գրական համալսոհների հետ միասին Ֆիքրեթը ջանում էր նպաստ բերել թուրք նոր գրականության ստեղծմանը՝ այդ ընթացքում կարևորելով գրական լեզվի առաջընթացը, սակայն հարազատ մնալով օսմաներենի կանոններին:

Թանգիմաթի բարեփոխումներից հետո թուրք գրականության մեջ ի հայտ եկան նաև կին բանաստեղծներ (Լեյլա Հանըմը, Շերեֆ Հանըմը, Մաքբուլե Լեման, Յաշար Նեգիհեն և այլք): Կանանց իրավունքների հարցն իր տեղն է գտել նաև «Սերվեթ-ի ֆյունուն» հանդեսի էջերում: Թուրք հայտնի գիտնական Քենան Աքյուզը նշում է, որ «Սերվեթ-ի ֆյունունի» ժամանակաշրջանը բավականին լայն և ընդգրկուն ձևով է անդրադարձել կանանց խնդիրներին: «Սերվեթ-ի ֆյունունի» բանաստեղծություններում, վեպերում և պիեսներում աչքի էր զարնում կնոջ քաղաքացիական իրավունքների (medenî hak) տխուր պատկերը՝⁵⁶: Հանդեսում հրատարակվում էին արձակագիր Ֆաթմա Ալիյեն (1862-1924) և բանաստեղծուհի Նիզար Հանըմը (1856-1918): Վերջինս, կարելի է ասել, «Սերվեթ-ի ֆյունունում» հրատարակվող կին պոետներից առավել աչքի ընկնողն էր: Նիզար Հանըմը զբաղվում էր նաև թարգմանությամբ. նրա գրչին են պատկանում Պուշկինի ստեղծագործությունների թարգմանությունները, որոնք կրկին ֆրանսերենից էին արվում:

Թևֆիք Ֆիքրեթը նույնպես թուրք գրականության մեջ կանանց խնդիրներն արծարծող նշանավոր հեղինակներից մեկն է: Նա իրապես հավատում էր կնոջ երջանիկ գոյությանը: «Եթե քաղաքակրթության զարդը արվեստն է, արվեստի

53 Տե՛ս Kaplan Mehmet, նշվ. աշխ., էջ 44.

54 Տե՛ս Kaplan Mehmet, նշվ. աշխ., էջ 45.

55 Фиш P., Писатели Турции-книги и судьбы, с.24.

56 St u Akyüz Kenan, Tevfik Fikret, Ankara, 1947, s. 284.

զարդն էլ կինն է» («Medeniyetin ziyneti sanatsa, sanatın ziyneti kadındır»),- գրում է քանաստեղծը⁵⁷: Ֆիքրեթը ցանկանում էր, որ կինը որքան հնարավոր է շուտ դառնա իր քաղաքացիական իրավունքների (medenî hak) տերը: Առողջ ու զարգացած հասարակություն ունենալը պայմանավորված չէ միայն տղամարդկանցով, հարկավոր է հասարակական բոլոր ոլորտներում ապահովել կին-տղամարդ համագործակցությունը:

Այսպիսով՝ Թևֆիք Ֆիքրեթը մի կողմից աշխատում էր բարձրացնել հասարակության քաղաքակրթական ընդհանուր մակարդակը, մյուս կողմից զբաղվում էր կանանց կրթական մակարդակի բարձրացմամբ: Նա բարձրաձայնում էր, որ զարգացման համար անհրաժեշտ է, որ տղամարդիկ ու կանայք հավասարաչափ ծառայեն հասարակությանը: Ֆիքրեթն իր գրական ստեղծագործություններում ու հրապարակախոսության մեջ փորձում էր կանանց համոզել, որ կյանքում հաջողության կարելի է հասնել գրագիտության ու կրթության միջոցով: «Ազգը, որը կրթության չի տալիս իր աղջիկներին, զավակներին դատապարտում է հոգևոր որություն» («Kızlarını okutmıyan millet, oğullarını ma’nevî öksüzlüğe mahkûm etmiş demektir»)⁵⁸, - գրում էր քանաստեղծը:

3. Քաղաքացիական քնարերգության կայացումը

1900 թ. առաջին անգամ լույս տեսավ Թևֆիք Ֆիքրեթի «Կոտրված քնար» («Rübâb-ı Şikeste») ժողովածուն⁵⁹, որի այլաբանական անվանումը լիովին համապատասխանում էր նրա բովանդակությանը: Նրանում հրապարակված քանաստեղծությունների հիմքում ընկած էին հետևյալ մոտիվները. քանաստեղծի թախիծը, երիտասարդ տարիներին չիրականացված երազանքները, պայծառ ապագայի նկատմամբ կործանված հույսերն ու հուսահատությունը: 1896-1900 թթ. գրած իր ստեղծագործություններում Ֆիքրեթը սեփական «ես»-ը նկարագրում էր չափազանց տխուր գույներով, տառապյալ ու հոռետեսական պատկերներով, ինչն էլ հետագայում դարձավ նրա կյանքի փիլիսոփայությունը: «Մելանխոլիա» («İktirâb») քանաստեղծության մեջ նա արտահայտում էր իրեն համակած սևամաղձությունը, որը «մահից անգամ սարսափելի է»⁶⁰: «Կյանքի հանգույցը» («Ukde-i hayat») սոնետում քանաստեղծը ողբում է իր կորցրած երիտասարդ տարիները և կյանքը մնանեցնում «անվերջանալի մի մութ գիշերվա»⁶¹: Ճշմարտությունից վախեցող և կյանքի հանդեպ հոռետեսական վերաբերմունք ունեցող Ֆիքրեթն իր փրկությունը փորձում էր գտնել արվեստի, սիրո և երազանքների մեջ. երազելը քանաստեղծի ոգեշնչման աղբյուրն է, «աշխարհի էությունը» («ayn-ı kâinat»): Ֆիքրեթը հորինված, երևակայական կյանքը (ömr-i muhayyel, ömr-i hayâlî) պատկերացնում էր «վարդի թփերի մեջ» («gülünler içinde»), «կանաչ լճերի մեջ» («yeşil göllerde»), «ոգեշնչում հաղորդող մաքրության մեջ» («sâfiyyet-i vecd-âver içinde»): Հատկա-

57 Տե՛ս Tevfik Fikret, “Nevha-i bi-sût”, Servet-i Fünun, 1314 (1898), Sayı 400, համեմատիր Akyüz Kenan, նշվ. աշխ., էջ 285.

58 Tevfik Fikret, Halûk’un Defteri, Bir Kız Mektebi İçin, s.77.

59 1900 թ. փետրվարին վաճառքի հանված գիրքը կարճ ժամանակահատվածում սպառվեց և մեկ ամիս անց վերահրատարակվեց: Ժողովածուն կրկին հրատարակվել ու լրացվել է նոր քանաստեղծություններով արդեն երիտթուրքական հեղաշրջումից հետո:

60 Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, İktirâb, ss. 364-366.

61 Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Ukde-i hayat, ss. 95-96.

նշական է, որ կյանքի վերջին տարիներին նա փորձեց սեփական ստեղծագործություններում նկարագրած երազանքների միջավայրը գտնել 1905 թ. Բոսֆորի ափին՝ տոսիների պուրակում իր կառուցած առանձնատանը՝ «Aşiyân»-ում:

Այս ամենով հանդերձ՝ նրա «Կոտրված քնար» ժողովածուն փաստում էր ըմբոստ քաղաքացիական քնարերգության կայացումը թուրք գրականության մեջ: 1890-ականների վերջին Թևֆիք Ֆիքրեթի պոեզիայում սուլթանների, ոգիների, հրեշտակների փոխարեն ի հայտ են գալիս իրական կերպարներ՝ ձկնորսներ, արհեստավորներ, մի խոսքով՝ հասարակ խավը: Մինչև Ֆիքրեթը նման հերոսներ թուրքական պոեզիայում չկային: «Օգնենք երեխաներին», «Ռամադանյան ողորմություն», «Չկնորսներ» բանաստեղծությունների լեյտմոտիվը գթությունն ու կարեկցանքն է:

Քաղաքացիական քնարերգության բացառիկ նմուշներից էր «Մառախուղ» («Sis») (1901թ.) բանաստեղծությունը⁶², որտեղ թուրք գրականության մեջ առաջին անգամ քաղաքական այլաբանության միջոցով (մառախուղ՝ արդուկամիդյան վարչակարգ) իր քաղաքական կողմնորոշումներն արտահայտելով՝ Ֆիքրեթը Ստամբուլն անվանում է «գարշելի, գագրելի, անիծյալ քաղաք ու բռնության հրապարակ»: Մինչև Թևֆիք Ֆիքրեթը Օսմանյան կայսրության մայրաքաղաքը երբևէ չէր ենթարկվել այնպիսի հզոր քննադատության, որքան նրա պոեզիայում:

Սարիհա Սերթելի բնորոշմամբ՝ Ֆիքրեթը փորձում էր իր ընդվզումն արտահայտել կործանված կայսրության ու հասարակության դեմ⁶³: «Մառախուղը» կարծես թե նսեմացնում էր Արևմուտքի և Արևելքի համար մշտապես գրավիչ Ստամբուլի պատմական արժեքները, անգամ արբավայրերն ու մարդկանց: Թուրք հայտնի գրականագետ Ահմեթ Համդի Թանվիրնարը «Մառախուղ» բանաստեղծությունը որակել է որպես «սարսափելի ու դաժան մի նգովք, ողբերգությունից ողբերգության անցնող տառապանք»⁶⁴:

Բանաստեղծության մեջ իշխում են սոցիալական մոտիվները, գերակայող զգացումներն են «նողկանք-ատելություն» («nefret») և «անեծք-նգովք» («lânet»): Ստամբուլը համեմատվում է անբարոյական կնոջ կերպարի հետ: Ֆիքրեթը մառախուղի այլաբանության միջոցով նշավակում է Ստամբուլի բարոյական նկարագիրը: Այս համատեքստում պատահական չեն արտուրդային երկվությունը՝ «ճերմակ խավար» («zulmet-i beyzâ»), մառախուղը նկարագրող խտացված այլաբանությունները՝ «փոշոտ ու սարսափելի թանձրություն» («Bir tozlu ve heybetli kesâfet»), «համառ ու կամակոր» («dûd-ı muannid»), «խոր խավարի վարագույր» («derin sütre-i muzlim»),

Ֆիքրեթը ստեղծում է գեղեցկության և բարոյականության միջև եղած հակադրություն՝ առաջ քաշելով «կեղտոտ անբարոյականի» կերպարը.

Hâricden, uzakdan açılan gözlere süzgün,
Çeşmân-ı kebudunla ne mûnis görünürsün.
Mûnis, fakat en kirli kadınlar gibi mûnis⁶⁵.

62 Տե՛ս Պետրոսյան Տ., Թևֆիք Ֆիքրեթի պոեզիայի որոշ առանձնահատկությունների շուրջ («Մառախուղ» բանաստեղծությունը), «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», գլխ. խմբագիր Ռ Սաֆրաստյան, հատ. VI, ԳՂ ՊԱ ԱԻ, Եր., 2009, էջ 323- 330:

63 Տե՛ս Sertel Sabiha, նշվ. աշխ., էջ 28.

64 Tanpınar Ahmet Hamdi, Edebiyat Üzerine Makaleler, İstanbul, 1969, s. 288.

65 Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Sis, s. 296.

**Արտաքինից, հեռվից նայող աչքերի համար մեղամաղձոտ,
Կապուտաչյա ինչ հաճելի ես երևում:
Հաճելի, սակայն ամենակեղտոտ կանանց նման հաճելի:**

Բանաստեղծության մեջ ներկայացված է նաև Ստամբուլի իր ճարտարապետությամբ: Այստեղ ուշադրության են արժանի բանաստեղծի մեկնաբանություններն ու նկարագրման եղանակները: Ճարտարապետական շինությունների շարքում հայտնվում են «մահաբեր աշտարակներ», «մռայլ պալատներ», «չարքերի մման սյուներ», «տանիքները փլված դպրոցներ» և այլն: Բանաստեղծության վերջին հատվածում հեղինակը ներկայացնում է քաղաքի անկման պատճառները, մեղադրում է բարոյականությունը կորցրած մարդկանց: Ֆիքրեթը նկարագրում է Ստամբուլի բնակիչների կյանքը, նրանց վարքուբարքը, քաղաքում տիրող քաղաքական-սոցիալական իրավիճակը՝ քննադատելով Աբդուլ Համիդի վարչակարգը, որը պատճառ է դարձել հոգևոր կյանքի անկման ու ծայրահեղ աղքատության: Քաղաքում տիրում է սով, համատարած վախի մթնոլորտ է: **Կայսրության գինվորական ու մտավորական խավը քաղաքականապես դատապարտված է, երիտասարդությունը անհոգ է, երեխաները՝ անբան ու անապաստան: Ստամբուլը պոետի ասելության ցասունով համեմատվում է անառակ կնոջ կերպարի հետ: Եվ այս ամենը քողարկված է մառախուղի անթափանց շերտով.**

Örtün, evet ey hâile... örtün, evet ey şehri
Örtün ve müebbed uyu, ey fâcire-i dehr!..⁶⁶

Ծածկվիր, այո՛, հե՛յ ողբերգություն...ծածկվիր, այո՛, հե՛յ քաղաք,
Ծածկվիր և անվերջանալի քուն՝ մտիր, հե՛յ, համաշխարհային պոռնիկ:

Թևֆիկ Ֆիքրեթի «Մառախուղ» ստեղծագործությունից մեզ հայտնի՝ Ստամբուլի կերպարի «համաշխարհային պոռնիկ» բնութագիրը հետագայում հաստատեց Եղիշե Չարենցի «Ստամբուլ» պոեմը (1924թ.).

Մի անուն դու ունես, Ստամբուլ,
Միջազգային պոռնիկ⁶⁷:

Թևֆիկ Ֆիքրեթի ստեղծագործությունների մեջ արժանահիշատակ է «Հին պատմություն» («Tarih-i Kadim») պոեմը⁶⁸: Այս ստեղծագործությունը հետաքրքիր է նախ և առաջ հեղինակի փիլիսոփայական հայացքների արտացոլման առումով և արժևորվում է նաև նրանով, որ յուրօրինակ անդրադարձ է պատմությանն ու արժեքներին: Պոեմը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջին մասում խոսվում է մարդկության պատմության, նրա անցյալի ու ապագայի մասին, իսկ երկրորդ մասում շոշափվում են կրոնին առնչվող հարցեր:

Մարդկանց հասցված չարիքի պատճառը Թևֆիկ Ֆիքրեթը համարում է պա-

66 Tevfik Fikret, նշվ. աշխ., էջ 297, 299.

67 Չարենց Եղիշե, Պոեմներ և բանաստեղծություններ, Եր., 1984, էջ 152:

68 Մանրամասն տես Պետրոսյան Տ., Թևֆիկ Ֆիքրեթի «Հին պատմություն» պոեմի և նրա լեզվաոճական առանձնահատկությունների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, N 3(626), էջ 269-273:

տերազմները, որոնք միլիոնավոր մարդկանց կյանք են խլել: Բանաստեղծը քննադատում է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը, բռնությունն ու կեղեքումը՝ դրանք համարելով մարդկության արժանապատվության դեմ ուղղված գործողություններ:

Doğruluk dilde yok, dudaklarda;
Hayır ayaklarda, şer kucaklarda;
Bir hakikat: Hakikat-ı zencîr;
Bir belâgat: Belâgat-ı şemşîr;
Hak kavînin, demek şerîrindir;
En celî hikmet: Ezmeyen ezilir,
Her şeref yapma, her saâdet piç;
Her şeyin ibtidâsı, âhiri hiç...

Din şehit ister, assüman-kurban.
Her zaman, her terafta kan, kan, kan⁶⁹.

Ճշմարտությունը լեզվին չէ, այլ շրթունքներին,
Բարին ոտքերի տակ է, չարը՝ ձեռքերի վրա,
Մի ճշմարտություն կա՝ կապանքների ճշմարտություն,
Մի ճարտասանություն կա՝ սրի լեզու,
Իրավունքն ուժեղինն է, այսինքն՝ չարինը,
Ամենապարզ փիլիսոփայությունն է. չկեղեքողը կեղեքվում է,
Ամեն արժանապատվություն կեղծ է, ամեն երջանկություն՝ թերի,
Ամեն բանի սկիզբը, վերջը ոչինչ է...

Հավատքը շեհիդներ է պահանջում, երկինքը՝ զոհեր:
Միշտ և ամենուրեք՝ արյուն, արյուն, արյուն:

Ինչպես տեսնում ենք, Ֆիքրեթի յուրաքանչյուր միտք մի սեղմ աֆորիզմ է:

Թևֆիք Ֆիքրեթը, մերկացնելով իր հայրենիքում տիրող իրավիճակը, միաժամանակ հավատում է ապագային, որն իր հետ լուսավոր օրեր է բերելու: Բանաստեղծը նկարագրում է ապագայի պատկերը՝ առանց պատերազմների, առանց նվաճողների ու կեղեքիչների, առանց սարուկների ու տերերի, առանց չարագործության: Ըստ հեղինակի՝ մարդը պետք է ինքնին արժեք ներկայացնի:

«Հին պատմության» մեջ Ֆիքրեթը հանդես է գալիս դոգմաների դեմ և առաջ է քաշում կասկածի դրույթը, իսկ հոռետեսությունն արդեն մարտահրավեր է հավատին: Թուրք հոգևորականությունը քննադատել է պոեմը, հեղինակին անվանել «անաստված», «կրոնի թշնամի»: Մամուլում հայտնվեցին Ֆիքրեթի դեմ ուղղված քննադատական հոդվածներ, որոնց մի մասը պատկանում էր Մեհմեթ Աբիֆի գրչին: 1914-ին ի պատասխան Մեհմեթ Աբիֆի, Թևֆիք Ֆիքրեթը գրում է. «Հին պատմության հավելված» («Tarih-i Kadim'e Zeyl») բանաստեղծությունը: Այն ուղղված էր պահպանողական կրոնականների դեմ: Հեղինակը փորձում էր պա-

69 Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Tarih-i Kadîm, s. 431.

տասխան տալ վերջիններիս, մասնավորապես Մեհմեթ Աքիֆին⁷⁰: Ուստիև այս բանաստեղծությունը հայտնի է նաև «Պատասխան» («Bir Cevâb»), «Մոլլա Սըրաֆ» («Molla Sırât») անուններով⁷¹: Այնուհետև Ֆիքրեթը հանգում է այն եզրակացության, որ մարդն ինքն է ստեղծում իր համար պաշտամունքի առարկաներ.

Beşerin böyle delâletleri var,
Putunu kendi yapar, kendi tapar...⁷²

Մարդկությունն այսպիսի մոլորություններ ունի,
Պաշտամունքի առարկաներն ինքն է ստեղծում, ինքն է պաշտում:

Աստվածներ ստեղծելու նման գործելակերպին Ֆիքրեթը հակադրում է իր կրոնը՝ կյանքի ու մարդու հանդեպ ունեցած հավատի և սիրո կրոնը.

Yaşamak dîni benim dînimdir.
Müminim, varlığa îmanım var...⁷³

Ապրելու (կյանքի) կրոնն իմ կրոնն է,
Հավատացյալ եմ. հավատում եմ կեցությանը (գոյությանը):

Թևֆիք Ֆիքրեթը փորձում է ապացուցել, որ չարի ու բարու աղբյուրները պետք է փնտրել ոչ թե Աստծու, այլ մարդու մեջ: Դրանով նա առաջ է քաշում, իր խոսքերով, «կյանքի կրոնի» ճշմարտացիությունը. «Ճշմարիտ կրոնը, իմ կարծիքով, այսօր կյանքի կրոնն է» («Dîn-i hak bence bugün dîn-i hayât»)⁷⁴:

Այսպիսով «Մառախտղ» և «Հին պատմություն» ստեղծագործությունները թուրքական գրականության պատմության մեջ Ֆիքրեթին ամրագրեցին որպես քաղաքացիական քնարերգության առաջնեկներից մեկը հանդիսացող՝ ազատախոհ և առաջադիմական բանաստեղծ:

4. Հայ վրիժառուի կերպարը

Թևֆիք Ֆիքրեթի քաղաքացիական քնարերգությունը դրսևորվել է նաև Օսմանյան կայսրության պատմության մեջ իր նախադեպը չունեցող՝ սուլթան Աբդուլ Համիդի դեմ կազմակերպված 1905 թ. հուլիսի 21-ի մահափորձը⁷⁵ գովերգող «Հապաղման մի ակնթարթ» («Bir Lâhza-i Te'ahhur») բանաստեղծությունում: Բանաստեղծի հիացմունքի առարկան այն «անտեսանելի», բայց «ազատագրող»

70 Առավել մանրամասն տե՛ս Sertel Sabiha, նշվ. աշխ., էջ 42-48.

71 «Մոլլա Սըրաֆի» մեկնաբանություններից տե՛ս Cemal Mithat, նշվ. աշխ., էջ 108-111, Okay Orhan, «Tarih-i Kadim Münakaşaları Dışında Tevfik Fikret ve Mehmet Âkif», Sanat ve Edebiyat Yazıları, Dergâh Yayınları, İstanbul, 1990, s. 143-158.

72 Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Tarih-i Kadim'e Zeyl, s. 443

73 Tevfik Fikret, նշվ. աշխ., էջ 444.

74 Tevfik Fikret, նշվ. աշխ., էջ 444.

75 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Երլտըզի մահափորձը, Եղեռնական ատեանի դատավարությունը տեղի ունեցած Պոլսոյ մեջ, 1905 նոյեմբերին: Ստոյգ տեղեկություններ մահափորձի մասին, «Նոր օր», Աթենք, N 40, 1933:

ձեռքն է, որը բարձրանում է բռնակալ սուլթանի դեմ: Ֆիքրեթն իր հերոսին պատկերում է իբրև անօրինակ զոհողություններով Աբդուլ Համիդի բռնապետության դեմ պայքարող վրիժառու:

Հայտնի է, որ այդ ազատարար վրիժառուի կոնկրետ-քաղաքական մարմնավորումը դեռևս 1904 թ. փետրվար-մարտ ամիսներին Մոֆիայում տեղի ունեցած Երրորդ Ընդհանուր ժողովի որոշմամբ Աբդուլ Համիդի ահաբեկման գործը նախաձեռնած Հայ Յեղափոխական Դաշնակցությունն էր: «Նժույզի գործողություն» անունով⁷⁶ հայտնի այս ձեռնարկի գաղափարը պատկանում էր ՀՅԴ հիմնադիր Քրիստափոր Միքայելյանին. նա էլ վարել էր նախապատրաստական աշխատանքները⁷⁷: Դաշնակցականները հանգամանորեն ուսումնասիրել էին Սելամլըքի արարողությունը (սուլթանի ուրբաթօրյա այցելությունը մզկիթ), Աբդուլ Համիդի տեղաշարժի երթուղին և որպես ահաբեկման միջոց ընտրել էին «դժոխսային մեքենան»: Անհրաժեշտ էր շքեղ մի կառք՝ ընտիր ձիերով, որն առանց կասկած հարուցելու կկանգնե՞ր մզկիթի բակում՝ հնարավորինս մոտ սուլթանական թիրախին: Վիեննայում գնվում և մեծ դժվարությամբ Ստամբուլ է տեղափոխվում մնան մի կառք⁷⁸: 1905 թ. հուլիսի 21-ին՝ Սելամլըքի արարողությունից հետո, դաշնակցականների ձեռքով գործի դրված դժոխսային մեքենան պայթեց՝ ոչնչացնելով կառքը, բազմաթիվ մարդկանց... սակայն ոչ Աբդուլ Համիդին: Սուլթանը գրույցի էր բռնվել շեյխ-ուլ-իսլամի հետ, ուստի սովորականից փոքր-ինչ ուշ դուրս եկավ մզկիթի բակից:

Այս կապակցությամբ իր «Սպանության փորձ սուլթանի դեմ» հոդվածում ՀՅԴ «Դրօշակ» պաշտոնաթերթը գրում էր. «Հեռագրական գործակալությունները հաղորդում են, որ ուրբաթ՝ հուլիսի 21-ին՝ Սելամլըքի արարողությունից հետո, երբ սուլթան Աբդուլ Համիդը վերադառնում էր պալատ, մի ռումբ պայթեց մզկիթի առաջ: Սուլթանը ողջ մնաց, բայց իրեն շրջապատողներից մոտ երկու հարյուր հոգի սպանվեց ու վիրավորվեց»⁷⁹:

Դիշտ է, մահափորձը ձախողվել էր, սակայն Աբդուլ Համիդի տագնապն ու հիվանդագին կասկածատնությունը կրկնապատկվել էին: Բազմաթիվ խուզարկություններից ու ձեռքարկություններից հետո ոստիկանությանը հաջողվում է բացահայտել մահափորձն իրականացնողներին⁸⁰: Այս դեպքը մեծ արձագանք և հասարակական հնչեղություն է ստանում եվրոպական մամուլում⁸¹, սակայն միջազգային հանրությունը հայտնի պատճառներով չէր շտապում դատապարտել

76 Տե՛ս Լյուիսեր Դ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, ք. հատ., խմբ. Գ. Տասնապետեան, Պէրյուք, 1985, էջ 104-192:

77 1905-ի մարտին Մոֆիայի մոտ՝ Վիտոշ Լեռան լանջին, ռումբի փորձարկման պահին զոհված Քրիստափոր Միքայելյանի փոխարեն գործի ղեկավարությունը ստանձնում է Մ. Մարգարյանը (Սաֆր): Տե՛ս Տասնապետեան Դ., Գ.Յ. Դաշնակցությունը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդի. ժողով (1890-1924), Աթնք, 1988, էջ 75-76:

78 Տե՛ս Վարանդեան Մ., Գ. Յ. Դաշնակցութեան պատմություն, հատ. առաջին, Պարիզ, 1932, էջ 439-440:

79 Տե՛ս «Դրօշակ», ժնեւ, 1905, N 8 (161), օգոստոս:

80 Ոստիկանությունը հայտնաբերում է ծնունդով բելգիացի ժողիսին, ով մահափորձի գլխավոր գործող անձանցից էր: Նա համարձակորեն խոստովանում է սեփական մասնակցությունը, սակայն հրաժարվում է մատնել իր հայ ընկերներին՝ տալով միայն մահացածների ու փախուստի մեջ գտնվողների անունները: Ժողիսը դատապարտվում է մահապատժի, սակայն Բելգիայի և մի քանի այլ երկրների կառավարությունների միջամտության արդյունքում ազատ է արձակվում և վերադառնում է իր հայրենիք:

81 Գերմանական «Frankfurter Zeitung»-ը հուլիսի 22-ի համարում գրում էր. «Եթե մահափորձի հեղինակը երեկ իր զարհուրելի հարվածը կես վայրկյան հետաձգեր, սուլթանն էլ, իր զավակներն էլ, պալատականների մեծագույն մասն էլ անտարակույս պիտի զոհվեին»: Ավստրիական «Die Zeit» պարբերականն իր հուլիսի 26-ի համարում գրում էր. «Թուրքական թերթերը հայտնում են, որ ըստ կիսապաշտոնական տվյալների՝ 82 ընտանիք և 400 մարդ սպի մեջ են»: Տե՛ս «Դրօշակ», N 8 (161), 1905, օգոստոս, Գավելված:

բռնակալ Համիդի դեմ ուղղված գործողությունը:

Ուստի պատահական չէ, որ Աբդուլ Համիդի մեծ աղմուկ հանած մահափորձն արձագանք գտավ Ֆիքրեթի «Հապաղման մի ակնթարթ» («Bir Lâhza-i Te'ahhur») բանաստեղծության մեջ: Նա անկեղծորեն ողջունեց մահափորձի գաղափարը՝ այն իրականացնողին անվանելով «փառապանձ որսորդ».

Ey şanlı avcı, dâminin bîhûde kurmadın!
Attın... Fakat yazık ki, yazıklar ki vurmadın⁸²!

Ո՛վ, փառապանձ որսորդ, թակարդդ իզուր լարեցիր,
Պայթեցրիր, սակայն ափսո՛ւ, ափսո՛ւ, որ չսպանեցիր:

Բանաստեղծը համոզված էր, որ եթե մահափորձն իրականանար, ապա կվերանային Օսմանյան կայսրության բնականոն զարգացման արգելքները, և նրանում ապրող ազգերը կարթնանային մղձավանջից: Հեղինակի ժամանակից անկնհայտ է. նա վստահ է, որ ազատության ու ժողովրդավարության համար բավական է դաժան փառիշտի մահը: Ըստ Ֆիքրեթի՝ հաջողված մահափորձն իր հետ բարօրություն էր բերելու.

Kanlarla bir cinâyete pek benzeyen bu iş
Bir hayır olurdu, misil asırlarca geçmemiş⁸³.

Սպանդի չափ արնառատ այդ գործողությունը
Դարերով տենչած բարօրություն կբերեր երկրին:

Հատկանշական է, թե ինչպես էր արտահայտվում բանաստեղծը սուլթանի հետ զրույցի բռնված շեյխ-ուլ-իսլամի հասցեին.

Lâkin tesâdüf...Âh o kavîler münâdimi,
Âcizlerin, zavallıların hasm-ı dâimi.
Birden yetiştî mahve bu tedbîr-i hârikî;
Söndürdü bir nefeste bu ümmîd-i bârikî⁸⁴;

Սակայն պատահական հանդիպումը...Ա՛յս, այդ ուժեղների օգնականը,
Թույլերի, խեղճերի մշտական թշնամին⁸⁵,
Միանգամից ավարտին հասցրեց այդ հրաշալի մտահղացումը,
Եվ մի ակնթարթում հանգցրեց այս երջանիկ հույսի շողը:

«Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունը, որը ձեռագիր տարբերակով շրջում էր ժողովրդի մեջ, համընդհանուր արձագանք գտավ: Բնական է, որ այն չէր կարող հրատարակվել աբդուլհամիդյան հետապնդումների և դաժան գրաքննության շրջանում: Բանաստեղծությունը հրատարակվեց միայն երիտթուրքական հեղաշրջումից հետո⁸⁶ և բազում քննադատությունների, իսկ հետագա-

82 Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Bir Lâhza-i Te'ahhur, s. 306.

83 Նույն տեղում:

84 Նույն տեղում:

85 Նկատի ունեք շեյխ ուլ իսլամին:

86 Թևֆիք Ֆիքրեթն այս բանաստեղծությունն ընդգրկեց իր «Կտրված քնար» («Rübâb-ı Şikeste») ժողովածուի երրորդ հրատարակության մեջ (Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Üçüncü Baskı, 1326 (1910), Tanin. Matbaası, İstanbul).

յուն էլ՝ բանավեճերի ու տարակարծությունների տեղիք տվեց:

Թուրք հեղինակների համար անընդունելի և դատապարտելի էին Ֆիքրեթի կողմից հայ վրիժառուին «փառապանձ որսորդ» (şanlı avcı) անվանելը, ինչպես նաև բանաստեղծության մեջ տեղ գտած այնպիսի բնութագրումներ, ինչպիսիք են «փառապանձ պայթուն» (darbe-i mübeccele), «վրիժառու ծուխ» (dûd-i müntakim) և այլն, որոնք ներբողում էին բռնակալի դեմ մահափորձի գաղափարը և այն իրականացնողին⁸⁷: Ուստի թուրք պատմաբան Չուխուրի Դանըշմանը գրում էր. «Իրականում ցավալի երևույթ է, որ Թևֆիք Ֆիքրեթը խրախուսում է իսլամական խալիֆի դեմ մահափորձ իրականացնող գաղտնի քաղաքական կազմակերպության անդամներին՝ անվանելով նրանց փառապանձ որսորդ»⁸⁸: Թուրք հետազոտողը չի «մոռացել» շեշտել Աբդուլ Համիդի «իսլամական խալիֆ» լինելու հանգամանքը: Հասկանալի են երևույթին համախալամական ընդգրկում հաղորդելու և ազգային հիմնախնդրին դավանաբանականը պատվաստելու նրա ջանքերը:

Թուրք հեղինակները կեղծելով իրականությունը պնդում էին նաև, որ Ֆիքրեթն անտեղյակ էր Աբդուլ Համիդի դեմ մահափորձ իրականացնող հայերի իրական նպատակներին: «Սպանելով փաղիշահին, ինչպես նաև պայթեցնելով Բարձր Դուռը, Գալաթա կամուրջը, թունելը, Օսմանյան բանկը, դեսպանատները, տեղական և օտարերկրյա կարևոր հաստատությունները և Ստամբուլում բարձրացնելով ապստամբություն՝ հայերը փորձում էին օրակարգային դարձնել հայկական պետության ստեղծումը, ինչպես նաև գրավել Արևմտյան երկրների ուշադրությունն ու ապահովել վերջիններիս միջամտությունն այդ գործին»⁸⁹:

Ըստ մեկ այլ թուրք հեղինակի՝ գրականագետ Մեմեթ Ֆուաթի՝ «Հայերի նպատակը Անատոլիայի⁹⁰, այսպես կոչված, վեց վիլայեթների (Vilâyet-i Sitte/ Altı Vilayet) շրջանում հայկական պետության ստեղծումն է»⁹¹: Փորձելով «արդարացնել» Ֆիքրեթին՝ նա գրում է, որ համիդյան բռնապետության դարաշրջանում տիրող «խավարի պայմաններում» մահափորձն այս տեսանկյունից դիտելու հնարավորությունը բացակայում էր⁹²:

Իսկ արդեն մեր ժամանակակից Իսմաիլ Փարլաթըրը պնդում է, որ Ֆիքրեթը լավ չիմանալով հայկական լոբբիի «գարշելի ձգտումները», նման բանաս-

87 Թուրք հեղինակները հիմնականում հենվում են այն համոզմունքի վրա, որ մահափորձն իրականացնողը հայկական գաղտնի քաղաքական կազմակերպության անդամ է եղել (տես Fuat Memet, Tevfik Fikret, Yaşamı, Düşünce Dünyası, Sanatçı, Kişiliği, Seçme Şiirleri, İstanbul, 2008, s. 46): Որոշ հետազոտողների մոտ անճշտություն կա մահափորձի թվականի հետ կապված: Մի շարք թուրք ուսումնասիրողներ նշում են 1906 թվականը: Տես Akyüz Kenan, Tevfik Fikret, Ankara, 1947, s. 84; Şükrü Kemalettin, Tevfik Fikret, Hayatı ve Şiirleri, İstanbul, 1931, s. 45; Teber Serol, Aşiyandaki Kâhin, Tevfik Fikretin Melankolik Dünyası, İstanbul, 2002, s. 161): Նույն թվականը հիշատակում է նաև խորհրդային արևելագետ Լ. Ալկաևան: Տես Альковаева Л., Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., Москва, 1959, стр. 87.

88 Danişman Zuhuri, Sultan İkinci Abdülhamid Han, İstanbul, 1966, s. 174.

89 Danişmend İsmail Hâmi, İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi, cilt IV, İstanbul, 1955, s. 348. Նույն հեղինակին հիշատակում է նաև Մեհմեթ Քալիլանը՝ Kaplan Mehmet, Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser, s. 160. Տես նաև Fuat Memet, Tevfik Fikret, Yaşamı, Düşünce Dünyası, Sanatçı, Kişiliği, Seçme Şiirleri, İstanbul, 2008, s. 46.

90 Փոքր Ասիա թերակղզու արևմտյան հատվածը հայտնի էր Անատոլիա անվամբ՝ Դունաստանից արևելք ընկած լինելու պատճառով (իսկ նախքան Anatole նշանակում է արևելք): Հետագայում Անատոլիա կոչվեց նաև Փոքր Ասիան: Մինչդեռ, թուրքերն Անատոլիա (Anadolu) են անվանում ներկա ասիական Թուրքիան՝ ներառյալ Արևմտյան Հայաստանը: Արդյունքում՝ տեղանվան իմաստային բովանդակությունը աղավաղվում է Արևելյան Անատոլիա (Doğu Anadolu) տերմինի միջոցով: Ավելի մանրամասն տես Էդուարդ Լ.Դանիելյան, Հայաստանը և հայկական տեղանունները, «Վեմ», 2009, N 1, էջ 9-25:

91 Տես Fuat Memet, նշվ. աշխ., էջ 46.

92 Տես նույն տեղում:

տեղծություն է գրել, որը միայն Համիդի հանդեպ ունեցած աստելության արդյունք էր⁹³:

Ի դեպ, մինչև այսօր էլ շարունակվում է Թևֆիք Ֆիքրեթի բանաստեղծության հիմքում առկա փաստերի նենգափոխումը: Այսպես՝ թուրքական «Yeni Çağ» պարբերականն իր «Հայ դավաճաններին «փառապանծ որսորդ» անվանող մեծ պոեմը» հողվածում, փորձելով մանրամասնել մահափորձի իրողությունը, գրում է, որ հայկական գաղտնի կազմակերպության անդամները պայքարում էին «Արևելյան Անատոլիայում» անկախ Հայաստան ստեղծելու համար և Աբդուլ Համիդին ամենամեծ արգելքն էին համարում: Այդ պատճառով պլանավորում էին նրան վերացնել, ինչին «անտեղյակ» էր Ֆիքրեթը⁹⁴:

Եվ վերջապես թուրք հեղինակների համար այսօր էլ «մութ ու անհասկանալի» է մնացել այն հարցը, թե այդ ամենից հետո, երբ Աբդուլ Համիդն արդեն տապալվել էր և ամենքին հայտնի էր, թե ովքե՞ր և ի՞նչ նպատակով են իրականացրել 1905-ի մահափորձը, Ֆիքրեթը չի հրաժարվել բանաստեղծությունից և այն ներառել է 1910-ին լույս տեսած իր հայտնի «Կոտորված քնար» ժողովածուի մեջ:

Որքան էլ մեծ լինի թուրք հեղինակների «գարմանքը», որքան էլ նրանք փորձեն հիմնավորել Ֆիքրեթի այսպես կոչված՝ «իրավիճակին տեղյակ չլինելու փաստարկը», մինևույն է, վերջինիս քաղաքացիական կերպարը մեզ այլ բան է հուշում: Նա տեղյակ էր ժամանակի հրատապ խնդիրներին, և նման բանաստեղծությունը միայն Աբդուլ Համիդի հանդեպ ունեցած աստելության արդյունք չէր կարող լինել: Հնարավոր չէ Ֆիքրեթի հեղափոխականամետ պոեզիան մղել անհատական համակրանքների պարզունակ ոլորտը: Թևֆիք Ֆիքրեթը Օսմանյան կայսրության մայրամուտի փուլում թուրք մտավորականության հայտնի ներկայացուցիչներից էր և գեղարվեստական գրականության ու հրապարակախոսության մեջ նոր գաղափարների արտահայտողը: Ապրելով ու ստեղծագործելով բռնապետական վարչակարգի օրոք՝ թուրք բանաստեղծը, հրապարակախոսը, լրագրող-խմբագիրն ու մանկավարժը չէր կարող անտեղյակ լինել վաղուց «օդում կախված» հայկական խնդիրներին: Տարիներ շարունակ խմբագրելով իր ժամանակի թուրքական ամենաազդեցիկ ու ամենատառաջդեմ պարբերականը՝ «Մերվեթ-ի ֆյունուն»-ը, Ֆիքրեթը հանդես է եկել որպես տեղեկատվության կրող, դրա արտահանումն ու ներմուծումն իրականացնող:

Ճիշտ է, մահափորձի հետաքննությունը փոքր-ինչ ուշ բացահայտեց իրական «մեղավորներին», սակայն, ինչպես նույն թուրք հեղինակներն էին նշում՝ մահափորձը ազգությամբ հայ վրիժառուների իրականացրած նախորդ գործողությունների շարունակությունն էր: Եվ դժվար չէր Ֆիքրեթի նման քաղաքականապես թրծված մեկի համար հասկանալ, որ Աբդուլ Համիդի մահափորձը ևս հայ վրիժառուի ձեռքի գործը կարող էր լինել: Ավելին, նա չէր կարող անտեղյակ լինել նաև նախորդ իրադարձություններին, որոնք ցնցեցին համաշխարհային քաղաքական միտքը: Նկատի ունենք Օսմանյան բանկի գրավումը, ոմբային հարձակումները Ստամբուլում, որոնք իրականացվում էին ոչ թե Օսմանյան կայսրության ծայրամասերում, այլ մայրաքաղաքում (մասամբ նաև՝ ծովափնյա շրջաններում), որտեղ էապես զգացվում էր մեծ տերությունների քաղաքական ազդեցությունն ու տնտեսական ներկայությունը, և որտեղ յուրաքանչյուր

93 Տե՛ս Parlatur İsmail, Tevfik Fikret, Ankara, 2004, s. 73.

94 Տե՛ս Yeni Çağ, 17, Aralık, 2008.

միջադեպ անմիջապես արձագանք էր գտնում Եվրոպայում:

Ուրեմն՝ անհիմն են նաև թուրք հեղինակների փորձերը՝ «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունը ներկայացնել միայն որպես Աբդուլ Համիդի հանդեպ Թևֆիք Ֆիքրեթի ունեցած անսահման ատելության արդյունք, և ոչ թե հայ վրիժառուի մեծարման փաստ: Բանաստեղծությունը հեղինակի քաղաքական համակրանքների արդյունքն է, սկզբունքային քաղաքացիական դիրքորոշումը: Ուստի՝ եթե դուրս գանք պոեզիայի դաշտից, որտեղ Թևֆիք Ֆիքրեթը ողջունել է իր հերոսի՝ հայ վրիժառուի քայլը, քաղաքական ու քաղաքացիական դիտանկյունից կարելի է ասել, որ դրանով բանաստեղծը հայտարարել է իր համերաշխությունը Օսմանյան կայսրությունում ապրող ճնշված ժողովուրդների ազատագրական ձգտումներին:

Եվ վերջապես, ժամանակի հեռավորությունից կարևոր է հենց գրական հուշարձանը՝ բռնակալի դեմ բարձրացած, ազատություն բերող անտեսանելի ձեռքը փառաբանող «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունը: Ավելի քան մեկ դար բազմաթիվ ժողովուրդներ և՛ բնագրով, և՛ թարգմանություններով հաղորդակցվում են ժամանակի թուրք լավագույն բանաստեղծի հրաշալի ստեղծագործությանը, որտեղ փառաբանվում է հայ վրիժառուի կերպարն ու նրա սխրագործությունը:

Հապաղման մի ակնթարթ

Պայթյուն... Ծուխ... Եվ մի ամբողջ տոնախումբ ամբոխ,
Թամաշայի հավաքված հասարակ ամբոխը, կատաղած ու պատժող
Ձեռքի ճիրաններով⁹⁵ ծվեն-ծվեն եղավ,
Եվ հողս ցնդեցին ոտք, գլուխ, արյուն, ոսկոր:

Ո՛վ, փառապանձ պայթյուն, ո՛վ վրիժառու ծուխ,
Ո՞վ ես, ի՞նչ ես... ո՞վ է քեզ մղել այդ գրոհին, ինչու՞...

Քեզ ուղեկցող հազար հետաքրքրասեր հայացք կա, իսկ դու գաղտնի,
Մի անտեսանելի ձեռք ես հիշեցնում՝ ազատագրող:
Քո տիրապետող ձայնն այնպիսի ցասում է արտահայտում, որ
Ամեն տեղ ազատության իրավունքի զգացում է արթնացնում:

Քո պայթյունից դողում են բռնակալի ոտքերը,
Քո գալուստը վսեմության ամենահպարտ գահը ցնցեց,
Ցնցելով դարեր ի վեր խեղված կենսաձևը, ամենախոր
Քնից արթնացրեց վախի մեջ ապրող ազգերին:

Ո՛վ, փառապանձ որսորդ, թակարդդ իզուր լարեցիր,
Պայթեցրիր, սակայն ափսոս, ափսոս, որ չսպանեցիր:

95 Ակառի ունի վրիժառուին:

Եթե գեթ մի լուպե կանգներ այդ շրնդիատվող ժամանակը,
Եվ կամ եթե նա չկանգներ ինքը՝ այդ թագակիրը,
Մպանդի չափ արնառատ այդ գործողությունը
Դարերով տենչած բարօրություն կբերեր երկրին:

Մակայն պատահական հանդիպումը... Ա՛խ, միշտ ուժեղների օգնականը,
Թուլերի, խեղճերի մշտական թշնամին⁹⁶

Միանգամից կործանեց այդ հրաշալի մտահղացումը
Եվ մի ակնթարթում հանգցրեց այս երջանիկ հույսի շողը:

Ջարդարեց ծաղրանքի արժանի անհմաստ ճակատագիրը
Բռնության պատմության մեջ մի նոր հպարտության նախաբան:

Փրկվեց, իր իրավունքն ու պարտքն այժմ վրեժխնդիր լինելն է,
Եվ թող չմոռանա այդ մասին պատմությունը փուչ,
Նա, ով ժողովրդին ոտնահարելով այսօր զվարճանում է...
Հապաղման այդ ակնթարթին է պարտական իր ապրելու հաճույքի համար:

بر لحظة تأخر ⁹⁷

— ٥ تموز ، ١٣٢٢ —

برضبه ... بردومان ... وبوتون برکروه سور ،
برمشر وضيع تماشا ، خشين ، عقور
طبرناقليله بر يد قهرک ، ديدک ديدک ،
يوکلهی غور جوّه باجاق ، کله ، قان ، کمیک...

أى ضربته مجله ، أى دود منتقم ،
کيک ؟ نەسک ؟ .. بوصولته سائق ، سبب نه ؟ کيم ؟

96 Խոսքը շեյխ ուլ խլամի մասին է:

97 «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծության օսմաներեն բնօրինակը, որն առաջին անգամ տպագրվել է 1910 թ. Թևֆիք Ֆիքրեթի հրատարակած «Կոտրված քնար» ժողովածուի մեջ:

Արգե՛ կճե Բիկ նկա՛հ յո՛ցս , յո՛սն նի՛ան ,
 Բր ճո՛ստ Գի՛յի Ա՛գճիր Բիւրո՛սկ , ռի՛հա ղե՛ան .

Մալկ Սո՛սկ յո՛ սուրտ ռե՛ճին Գի՛շիճե՛ կե
 Իր Բրճե՛ իս իս իս յո՛ իս յո՛ իս յո՛ իս .

Վոճե՛ կլի՛ Բայ ղա՛հրի յի՛րր ղե՛լիկ .
 Ա՛կ Գրի՛ տա՛ իս իս յո՛ իս յո՛ իս յո՛ իս .

Տիլկո՛ւ Գո՛ւր ղե՛լիճ Գ՛ւսարի , Ա՛կ յո՛ իս
 Բր յո՛ իս յո՛ իս յո՛ իս յո՛ իս յո՛ իս .

Ա՛յ Տի՛նլի Ա՛յո՛ յի , ճա՛նկի Բիւրո՛ւ ղո՛ւր ճա՛նկ !
 Ա՛նճ . . . ղե՛լ յո՛ իս յո՛ իս , յո՛ իս յո՛ իս յո՛ իս !

ղո՛ւր ղե՛լիճ Բր ղե՛լիճ յո՛ իս յո՛ իս .
 Բա՛խոճ յո՛ ղո՛ւր ղե՛լիճ , յո՛ յո՛ իս յո՛ իս .

ղա՛նլիճ Բր յո՛ իս յո՛ իս յո՛ իս յո՛ իս .
 Բր յո՛ իս յո՛ իս , ղե՛լ յո՛ իս յո՛ իս յո՛ իս .

Լճն ղե՛լիճ . . . Ա՛հ , յո՛ ղո՛ւր ղե՛լիճ ,
 Գա՛նլիճ , ղո՛ւր ղե՛լիճ յո՛ իս .

Բրճն ղե՛լիճ յո՛ իս յո՛ իս յո՛ իս ,
 Տո՛նճուրճի Բր ղե՛լիճ յո՛ իս յո՛ իս ;

ղե՛լ ղե՛լիճ Բր ղե՛լիճ յո՛ իս յո՛ իս յո՛ իս
 ղե՛լիճ ղե՛լիճ Բր ղե՛լիճ ղե՛լիճ .

تورتولدی ؛ حقیدر ، آلهجق شیمدی انتقام ؛
لکن اونوتماسین شونی تاریخ سفله کام :
بر قومی چیکنه مکه بو کون اکلنن
بر خطه تأخره مدیون بو کیفنی !



Թևֆիք Ֆիքրեթի գերեզմանը՝ «Աշիյան բանգարանի» վերածված նրա առանձնատան բակում

Summary

INNOVATOR OF TURKISH LITERATURE- TEVFIK FIKRET

The Image of the Armenian Avenger in the Poem
“An Instant of Hesitation”

Tigran R. Petrosyan

The literary and pedagogical contribution of Tevfik Fikret (1867-1915) is exceptional in the cultural history of Turkey of the late 19th and early 20th century.

The writer is introduced as a prominent poet and children’s writer, as a skilled editor and publicist, as well as a progressive pedagogue raising sharp issues of education and instruction.

Unequivocally, Tevfik Fikret has his unique and leading role in the literary studies of Turkey during the era called “Servet-i Fyunun Literature” (“Servet-i Fünun Edebiyatı”).

After taking the office of the Chief Editor of the “Servet-i Fünun” journal in this period he turns it into a literary-art journal, the foundation for modernization of Turkish literature and an instrument introducing “westernization” (“garpcılık”) into Turkish literature.

This outstanding poet witnessed two fatal periods of the Ottoman Empire: his literary career coincided with Sultan Abdul Hamid’s era of tyranny – “zulum”, and then with the rule of the Young Turks. With his works and public activities Tevfik Fikret managed to stay away from the criminal policy of the Young Turks’ government in the national matters: in this sense also Tevfik Fikret stands out among the intelligent people of the time. He came and remained the innovator of Turkish literature. The poet’s collection of poems “The Broken Lyre” (“Rübab-ı Şikeste”) is the evidence of establishing rebellious civil lyricism in Turkish literature.

Before Tevfik Fikret, the capital of the Ottoman Empire had never undergone such a powerful criticism as in his poetry: for the first time in Turkish literature, implementing a deep allegory (fog – the administration of Abdul Hamid), the author calls Istanbul “a disgusting, villainous, damned city, a square for violence, a world skirts” (“The Fog” (“Sis”).

The poem, “One Moment of Procrastination” (“Bir Lâhza-i Te’ahhur”) is about the failed attempt to assassinate Abdul Hamid on July 21, 1905. This poem was sharply criticized by Turkish historians and literary critics as Tevfik Fikret calls the avenger of Armenian origin who made the attempt “a glorious hunter” (“şanlı avcı”).

The poem “The Old Story” is particularly valuable as it is, in fact, a unique reflection upon universal history and values. In the poem “The Old Story” the poet opposes religious dogmas and proposes the concept of doubt.

In his collection “Halouk’s Notebook” (“Halûk’un Defteri”) published in 1911, Tevfik Fikret put his most democratic and optimistic poems where the poet expressed his bright moods concerning a happy and wonderful future and the fate of his motherland.

Tevfik Fikret’s poetry for children with its bright ideas, educational and instructive significance, and variable genres is a unique phenomenon generally in Turkish literature (“Shermin”).

ՀԱՅԵՆԻՍՏԱՆԻ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

110 հոկտեմբեր 2011 թ. (10) քառյակ, քիչ 1 (33) հանգիստ-նորոգ

ՀԱՅԵՆԻՍՏԱՆԻ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ